

ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԴ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 1879



Կ. ՊՕԼՈՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 Գուճ-Գաբու, Պատրիարքարանի փողոց 11

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասրանեան	Ա. Արեւաշէր
Տիգրան էֆէնտի Եռասուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեէմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւաշէր
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Ձեռնասուրբեան դիւան

Յարաբերութեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Հովհաննէս Քահանա Մկրեան
Տիգրան էֆէնտի Եռասուֆեան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պողոս էֆէնտի Պառնասեան

Դաստիակութեան դիւան

Իրասասութեան դիւան

Սէրփիլէն էֆէնտի Արեւաշէր
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Գասպար էֆէնտի Չէրազ

Ներսէս փարզապետ Ասրանեան
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Օտեան

Կայուածոց դիւան

Նախաձեռնութեան դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Աբիկ էֆէնտի Ունճեան Արեւաշէր

Տարթու Ռափա էրեան էֆէնտի
Յարութիւն էֆ. Մէրեէմ-Գուլի Արեւաշէր
Միհրան էֆէնտի Չօպանեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափաղեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Արեւաշէր
Համբարձում էֆէնտի Մազպուլեան

Կարապետ էֆ. Խթիւնեան Արեւաշէր
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համբարձում էֆէնտի Ալաճաճեան

Ելմտական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Սարգիս էֆէնտի Գալուրճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ժ Դ

30 ՆՈՅՆՄԲԵՐ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Աձկն. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եռասուֆեան

Ա Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ա Ն Ք

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Ա. Վ. Իճակ	ԳՈՒՄԱՐՆԵՐ	47 Յ. Նիւմանեան Տօքթօր Բ. Գ
	Ա. Վ. Իճակ	(Ա. Վ. Իճակ)	48
1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ. 2	2 Կարապետ Եպս. Սերոբեան Բ. 2	Գուճգարու, Կետիկ փաշա Եւ. Գուճգարուի դուրս	Իւսկիւտար Ս. Կարապետ
2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. 2	3 Սիմօն Եպս. Սէֆիլեան	21 Գրիգոր Պէրպէրեան Բ. Գ	49 Միհրան Պահճէղափուլեան
3 Սիմօն Եպս. Սէֆիլեան	4 Կարապետ Գ. Սէֆեան	22 Գէորգ Ստիմարաճեան Բ.	50 Պողոս Թորգոսեան Բ. 2
4 Կարապետ Գ. Սէֆեան		23 Խաչիկ Մանկասարեան Բ. Գ	51 Նիկողոս Ալաճաճեան Բ.
	Բ. Վ. Իճակ	24 Կարապետ Աղարդաճեան	52 Տրդատ Փափաղեան Բ. Գ
5 Մտթէոս Եպս. Իզմիրլեան Բ.	6 Պողոս Վ. Խօրտամեան	25 Համբարձում Մազպուլեան	(Գ. Վ. Իճակ)
6 Պողոս Վ. Խօրտամեան	7 Յովհաննէս Գ. Մկրեան Բ. Գ	26 Մինաս Գափամաճեան	Գասթր բաշա
7 Յովհաննէս Գ. Մկրեան Բ. Գ	8 Գրիգոր » Աճէմեան Բ. Գ	27 Յովհաննէս Պոյաճեան Բ. Գ	53 Գասպար Չէրազ Բ.
8 Գրիգոր » Աճէմեան Բ. Գ		28 Ն. Մէզպուլեան Տօքթօր	Բերա
	Գ. Վ. Իճակ	29 Պողոս Պառնասեան	54 Աբիկ Ունճեան
9 Վահան Վ. Տ. Մինասեան	10 Յակոբ » Ա. Փափաղեան	30 Սարգիս Աղաբէկեան Բ. Գ	55 Գրիգոր Սէլիմիէճեան Բ. 2
10 Յակոբ » Ա. Փափաղեան	11 Սահակ Գ. Տ. Սարգսեան Բ.	31 Սահակ Ապրօ Բ. Գ	56 Գրիգոր Օտեան Բ. 2
11 Սահակ Գ. Տ. Սարգսեան Բ.	12 Խորէն » Փէշիվանեան Բ.	32 Սենեքերիմ Մանուկեան Բ. 2	57 Սէրփիլէն Բ. 2
12 Խորէն » Փէշիվանեան Բ.		33 Բարթող Քիւրքճիւղաշեան Բ.	58 Ռափայէլեան Տօքթօր Բ. 2
	Գ. Վ. Իճակ	34 Ատոլմ Տէրպէնց Բ. 2	59 Միքայէլ Մօճեան
13 Ներսէս Վ. Ասրանեան Բ. 2	14 Սուրբա Ք. Ստեփանեան	35 Գէորգ Աղապուլաշեան	60 Կարապետ Քաղաղեան Բ. 2
14 Սուրբա Ք. Ստեփանեան	15 Յարութիւն Սերոբեան Բ.	36 Յ. Մէրեէմ-Գուլի Բ.	61
15 Յարութիւն Սերոբեան Բ.	16 Վրթանէս » Պալեան Բ. 2	37 Աւետիս Կիրտաղեան	62
16 Վրթանէս » Պալեան Բ. 2		(Բ. Վ. Իճակ)	Միշագիւղ
	Ե. Վ. Իճակ	Պէշիկբաշ	63 Յակոբ Նորատունկեան Բ. Գ
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ. Գ	18 Յովհաննէս Վ. Փափաղեան	38 Անդրանիկ Կրճիկեան Բ.	64 Տիգրան Եռասուֆեան Բ. 2
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	19 Գարեգին » Թաթարեան	39 Ալիքսան Խորատունկեան Բ. 2	65 Մկրտիչ Գազանճեան Բ. 2
19 Գարեգին » Թաթարեան	20	40 Բարսեղ Հալաճեան Բ. 2	66 Աւետիս Գօրջեան Բ. 2
20		41 Մկրտիչ Քիւրքճիւղաշեան Բ.	67 Նշան Օտեան Բ. 2
		42 Սեպուհ Մազսուտեան Բ. 2	Պէյգօզ Եւ. Ղալաբիա
		43	68 Միքայէլ Մամիկանեան Բ. 2
		44	(Գ. Վ. Իճակ)
			Ղուզղունձոց Եւ. Իսախիէ
Բ. Բացակայութիւն առաջին :		Իւսկիւտար Ս. Խաչ :	69 Յովհաննէս Էսաեան Բ. 2
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :		45 Սիմօն Ֆէլիկեան	70 Ստեփան Չէլիկճեան Բ. 2
Բ. Գ Բացակայ բանաւոր պատճառ :		46 Ստեփան Ասրանեան Բ. Գ	

Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետեան Բ 2	Կարին	121 Ստեփան փափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 2		Տիվրիկ
Նալբգաբու	101 Սիմոն Մազսուտեան Բ 2	122 Նշան Գարադաշ
73 Յակոբ Եղմէնիճեան	Քեօբանէա	Զեյրուհի Եւ Մարաշ
Եկեղիմանայիկ Սամարիոյ	102 Մ. Փափաղեան Տօրթօր	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 2	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգապու	103 Վ. իշէն Ապաուլլան	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 2
75 Յովհաննէս Մարդարեան Բ	Նիկոմիդիա	Վաղտառ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս. Աստուածածին	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնաէրեան Բ 2
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ 2	Ակն	Տիգրանակերտ
Գուռուբէյմի	105 Աւետիս Պարոնեան	126 Մինրան Զօպանեան Բ
77 Ասափա Իկիտպաշեան Բ 2	Ղարանիսար	Վան
Հիսա Եւ Չօյաճի գիւղ	106	127
78 Յովհաննէս Արաշկունի Բ 2	Արաբկեր	Ազրամա
Նոր գիւղ Եւ Սրեխա	107 Կարապետ Խաչիկեան	128
79 Ղազար Հովուեան	Բաղէշ	Հայեպ Եւ Այնթապ
Պարստ	108	129
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ 2	Պուսա	Սեբաստիա
81 Յովհաննէս Կրճիկեան Բ 2	109 Քրիստոստուր Ղազարոսեան Բ	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
82 Տեղեմաք Էնքոէրճեան	Եղոնկիա	Թուսանիս
Քարակեօմրիկ	110	131
83 Սեպուհ Թիւրապեան Բ	Ամասիա	Կարս
84	111 Համբարձում Ալաճաճեանի	132 Արրահամ Յ. Այվաղեան
(Ե. Վիճակ)	Բայու	Զմշկածագ
Սամարիա	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ 2	133 Համբարձում Սարքէշիճեանի
75 Ալիքսան Պէշիրեան Բ	Եղեսիա	Գաղատիա
88 Եղիազար Մէլիքեան Բ 2	113 Յակոբ Իւթիւճեան	134
86 Մինաս Ճաֆճաֆեան Բ 2	Մանճրլըխ	Ատանա
88 Նազարէթ Շահապետեան	114	135
89 Յարութիւն Թիւրեան Բ 2	Հանքն	Արդէղ
90 Յակոբ Արշակ Բ	115	136 Մատթէոս Ալէքսան Բ
91	Երզնկա	Եօզղատ
92	116 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալեօզեան Բ 2
93	Թեքիրտաղ	Մալաթիա
94	117 Տիգրան Գ. Սինանեան Բ	138 Գէորգ Վարդանեան
Խաղիկ	Կեսարիա	Իզմիր
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 2	118 Գէորգ Գըլճեան Բ	139 Պապի Պապօսեան Բ
96 Ռէթէոս Պէշիրեան	Խաբէղ	Եգիպտոս
97 Սարգիս Արրահամեան Բ 2	119	140
98 Մ. Արծրունի Տօրթօր Բ 2	Պալքրես	
99 Սարգիս Քալուքճեան Բ 2		
100 Աթանազիոս Արապեան Բ 2		

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Տեղեկագիր Մայր դիւանի ի վերայ 37 անդիժ խնդրոց 7
1. Առաջարկութիւն Իսկէնաէրեան Էֆէնտիի հին պարսուց մասնակի վճարման համար շնորհակալութեան քուէ տալու մասին :
 2. Առաջարկութիւն Խառն ժողովոյ վանականաց գոյից յետ մահուան վանքին մնալու մասին :
 3. Հարցում Ալիքսանեան Էֆէնտիի առ Քաղ. ժողովն պանդուխտ աղքայնոց ազգային տրոց մասին :
 4. Առաջարկութիւն Քալամանեան Էֆէնտիի Երեսօխանական ընտրութեանց հսկող Յանձնաժողովոյ նկատմամբ :
 5. Հարցում Խառն ժողովոյ իւր մեծամասնութեան նկատմամբ :
 6. Բողոք Երեսօխանաց Երզնկայի Առաջնորդ Ալէսթեան Տ. Գրիգորիս Եպիսկոպոսի դէմ :
 7. Աղերսագիր պանդուխտ Տիվրիկոց :
 8. Առաջարկութիւն Ատենապետ փաշայի Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց և վարդապետաց նկատմամբ :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Տ. Ներսէս Արքազան Պատրիարք Հօր՝ եւ ատենապետութեամբ Տիգրան Էֆէնտիի Երեսօխանական, Ատենաք բացուեցաւ ժամ 7 1/2 ին, ի Երկայութեան 31 Երեսօխանաց, որոց թիւն 39 ի յանդեցաւ ի վերջէ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է. Ֆ. — Կը յիշեմ որ վերջին նիստին մէջ Եղած որոշման համաձայն երեք շարաթէն տեղի սխալ ունենար ժողովին գումարումն, սակայն շարաթ մ'աւելի յետաձգեցաւ, ինչ է արդեօք այս յետաձգման շարժառիթը, կը խնդրեմ որ Գիւանն այս մասին բացատրութիւն տալու շնորհ ընէ :

ԱՅԵՆԱՊԵՏ Է. Ֆ. — Գիւանն այդ բացատրութիւնը պիտի տար արդէն. բայց չու-

զեցիք վայրկեան մը համբերել, եւ կանխեցիք հարցնելու: Կը յիշէք անշուշտ որ վերջին նիստին մէջ ատենագրութեանց տպագրութեան նկատմամբ խնդիր յուզուելով Դիւանը յայտարարեց թէ պիտի ջանար երկու ատենագրութիւն միանգամայն յառաջիկայ նիստին տպեալ հասցնել, եթէ քանի մ'որ յետաձգուէր ժողովին գումարումն, եւ տպագրութեան ժամանակ տրուէր: Սակայն Դիւանը տեսնելով որ ժողովին գումարումն համար սահմանեալ միջոցին մէջ իւր այնքան ջանից հակառակ տպագրութիւնը չի պիտի կրնար տարատիլ, նիւթական արգելքներու պատճառաւ, տեսնելով նաեւ որ ժողովին օրակարգն սպառած էր արդէն, եւ հին ու անլոյծ խնդիրներու եկած էր կարգն, որ ստիպողականութիւն չունէին, անպատեհ չտեսու շարաթ մը յետաձգել ժողովին գումարումն, եւ ատենագրութիւնները հասցնել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես չեմ կարծեր որ ատենագրութեանց տպագրութեան շաւարտին գոհացուցիչ պատճառ մը լինի ժողովոյ գումարումը յետաձգելու: Եթէ ստուղիւ այս է պատճառը, կը յիշեմ որ ուրիշ անգամներ ալ թէեւ ատենագրութիւնը հասած է, սակայն ժողովոյ նիստերն անխափան տեղի ունեցած են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ օրակարգը բեռնաւորեալ լինէր այնպիսի խնդիրներով որ ըստ ստիպողական լուծում պահանջէին, ի հարկէ Դիւանն այսպիսի յետաձգում մը չէր մտաբերեր, բայց ըստ որում, ինչպէս յայտարարեցի արդէն, օրակարգն սպառած էր, Դիւանն ուղեց այս առիթէն օգտիլ, եւ ատենագրութեանց տպագրութիւնն աւարտել:

Կը յուսամ որ ժողովն այսպիսի կարծօրեայ յետաձգման մը համար թողտուութիւն չզղանար իւր Դիւանին, մանաւանդ երբ պարագաներն բաւական թողտու կը գտնուին, եւ այս բացատրութիւնս կը գոհացնէ զինքը:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես չեմ գանդատիր եղածին վրայ, այլ կը վստահուիմ որ

ժողովին որոշումներն այսուհետեւ գործարուին անմիջապէս, վասն զի ինչ որ ալ լինի այս յետաձգման պատճառն, ըստ իս բաւական չէ ժողովին գումարումն երկարաձգելու համար: ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք ձեր կարծիքն յայտնեցիք, իսկ ես ժողովին գիմելով կուզեմ իւր կամքը հասկնալ թէ բաւ կը համարի արդեօք ինչ բացատրութիւն որ տուի այս յետաձգման մասին:

ՉԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍՏ. — Կը բաւէ, զո՛հ ենք:

Ժողովը կը ՀԱՒԱՆԻ Ստենագրութեան Էֆէնտի բացատրութեանց, եւ կը վերջանայ սոյն միջադէպը:

4.

Վաւերացումն ԺԲ. Արտի ատենագրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովիս նախընթաց ԺԲ. եւ ԺԳ. նիստերու ատենագրութիւններն տպագրեալ հաղորդուած են արդէն Երեսօրխանաց, առաջինը սրուած է քանի մ'որ առաջ, եւ զայն ամենքն ալ կարգացած են անշուշտ, իսկ երկրորդն՝ այս առաւօտ ուստի մեր մէջ գտնուին թերեւս ոմանք, որ դեռ եւս զայն կարգացած չլինին, արգ եթէ կը հաճիք այսօր միայն առաջին ատենագրութիւնը գիտողութեան կենթարկենք եւ կը վաւերացնենք, իսկ միւսը կը վերապահենք յառաջիկայ նիստին:

ՉԱՅՆԵՐ. — Շատ աղէկ:

Ժողովը կը ՀԱՒԱՆԻ սոյն առաջարկութեան, Հետեւապէս Ատենագրութեան Էֆէնտին ի գիտողութիւն կը հրաւիրէ զԵրեսօրխանս ԺԲ. նիստի ատենագրութեան վրայ:

ԷՆՔՍԻԲՃԵԱՆ Տ. ԷՖ. — Այդ նիստին մէջ Քաղ. ժողովոյ անդամոց հրաժեշտի պատճառներուն նկատմամբ հարցում ուղղեցի, որ յղուեցաւ առ Ազգային վարչութիւնն, եւ որ արձանագրեալ է ատենագրութեան մէջ, երես 288, սխնակ Բ.: Սակայն պահ մ'ետեւ երբ ուրիշ Երեսօրխանաց կողմէ նախորդ նիստերու մէջ եղած ինչ ինչ հարցմանց պատասխանները կարդացուեցան, Սրբազան Նախագահն խօսքն ինձ ուղղելով ահաւասիկ այս հարցումներն են, ըսաւ, ժողովականաց հրաժեշտին պատճառն, եւ այս է, յարեց Նորին Սրբազանութիւնը, քու հարցմանդ պատասխանին: Կը գիտեմ որ ատենագրութիւնը Նախագահ Սրբազան Հօր այս խօսքը յիշատակած է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ստոյգ է, Սրբազան Նախագահը Էնքսէրճեան Էֆէնտիի հարցման միջանկեալ կերպով այդպիսի պատասխան մը տուաւ, որով ըսել ուղեց թէ ինչպէս կրնար Վարչութիւն մ'այսքան հարցմանց առջեւ տոկալ: Նոյն պահուն ես ալ սա գիտողութիւնն ըրի թէ բաւական ժամանակ է զի վեր հարցում եղած չէր, եւ թէ՛ դեռ նոր քանի մը հարցումներ տեղի կուեննային:

Ուրիշ գիտողութիւն տեղի չուեննար, եւ հետեւապէս Ատենագրութեան Էֆէնտին կը դնէ ԺԲ. նիստի ատենագրութիւնն եւ ժողովը միաձայն՝ եղած գիտողութիւններով հանգերձ ընդունելով կը ՎԱՒԵՐԱՑՆԷ զայն:

2.

Բացակայութիւն Երեսօրխանաց

Երեսօրխաններէն

- 1. Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան
- 2. Գրիգոր Էֆէնտի Պէրպէրեան

- 3. Մինաս » ձաֆձաֆեան
- 4. Յակոբ » Նորատունկեան
- 5. Տրդատ » Փափուղեան

Գրով ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած են այսօրեայ նիստն ըստական մնալ, Ատենագրութեան Էֆէնտին անոնց անունը կը յիշատակէ եւ բացակայութիւնն իրր օրինաւոր՝ արձանագրել կուտայ ներկայութեան տուածարին մէջ:

3.

Պատասխանի հարցման Երեսօրխանի Ք. Ղազարոսեան Էֆէնտիի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովիս վերջին նիստերէն միոյն մէջ մեր ընկերներէն Ղազարոսեան Էֆէնտին՝ եզրկտոսի խնդրոյն նկատմամբ հարցում ուղղելով ուղած էր տեղեկանալ թէ ինչո՞ւ Մեսրոպը եպիսկոպոսի դէմ յարուցեալ ամբաստանութիւնները քննելու համար յատուկ քննիչ յուղարկուած է հոն, մինչդեռ ուրիշ քանի մ'ամբաստանեալ առաջնորդներ Պոլիս բերուած են քննութեան ենթարկուելու համար: Հարցման հեղինակն այս առթիւ առաջարկած էր նաեւ որ Ազգային ժողովը յանձնախումբի մը ձեռքը քննին առնու Մեսրոպը Եպիսկոպոսի եզրկտոսի՝ ազգային արկղէն առած հաղար հինգ հարիւր լիրայի գումարին ծախուց հաշիւը: Ժողովը հարցում եւ առաջարկ միանգամայն Ազգային Վարչութեան յղած էր, առաջնոյն պատասխանելու, իսկ երկրորդին նկատմամբ պարտուպատշաճն իւր պատասխանատուութեան ներքեւ տնօրինելու համար: Ահաւասիկ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր կողմէ սոյն հարցման պատասխանն աւանդուած է Դիւանին, զոր կը հաղորդեմ ձեզ:

« Եգիպտոսի խնդիրը տեղական քննութեամբ կրնար պարզուիլ, տեղւոյն առաջնորդն առժամանակեայ դադարեցնելու հրաման գացած է, ցայսօր Տէրութեան միջամտութեանը չէ գիմուած, հաշւոյ խնդիրն քննիչ քահանային վերադարձէն յետոյ կիմացուի: »

Կը տեսնէք որ Նորին Սրբազնութիւնը հարցման նիւթ եղող խնդրոյն ուղղակի պատասխան տուած է:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գոհացուցիչ է պատասխանը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ կանոնի փակուած է այժմ այս հարցման միջոցէ պը:

4.

Պատասխանի հարցման Երեսփոխան Ս. Փափազեան ԷՖ. Ենտիի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք, որ ի՞նչ հարցմամբ խառն առաջարկ մ'ալ, փափագեան էֆէնտի կողմէ ուղղուած էր, Արարատեան ընկերութեան կողմէ վանայ մէջ հիմնուած վարժապետանոցին խնդրոյն վրայ: Այս ուսումնական հաստատութեան նկատմամբ անասորժ գրոյց մը հոչակ գանելով Արարատեան ընկերութիւնը վարչութեան առջեւ դատ բացեր էր տարածայնութեան հեղինակաց դէմ, եւ հետեւապէս փափագեան էֆէնտին առաջարկած էր յանձնարարել վարչութեան որ ստիպողութիւն ընծայէ այս դատին, եւ խնդիրը քննելով արդիւնքը յայտագրէ: Սոյն առաջարկը վարչութեան յղուած էր, զարժանն տնօրինելու եւ տեղեկագրելու համար, եւ ահա ատիկ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը այս մասին եւս սա պատասխանը կուտայ:

զան Պատրիարքը այս մասին եւս սա պատասխանը կուտայ:

« Ամենապատիւ Խորհմեան Սրբազանին գրուած է որ քննելով տեղեկագրէ: »

Արդ՝ ինչպէս կը տեսնէք կանխադեկոյց տեղեկութիւն մ'է այս խնդրոյն նկատմամբ, եւ ժողովին կը մնայ առ այժմ սպասել քննութեան ելքին, զոր ազգային վարչութիւնը պիտի հասնի անշուշտ ի վերջէ տեղեկագրել ժողովին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այս պատասխանին կը տեղեկանանք որ խնդրոյն քննութիւնը որոշուած, եւ յանձնարարուած է Խորհմեան Սրբազանին, բայց դեռ եւս չէ կատարուած: Արդ՝ քանի որ տակաւին դորժը վերջացած չէ, փափաքելի էր որ աշխարհական անձ մ'ալ, ինչպէ՞ս Աղաթօն էֆէնտին, որ վան կը գանուի, քննիչ սահմանուէր եւ այսպէս երկու անձինք, մին եկեղեցական դասէն եւ միւսն աշխարհիկ, իրեւ Յանձնարարութեամբ միանալով կատարէին այդ քննութիւնը: Խնդիրն ինքնին թէ կրօնական եւ միանգամայն ազգային վարժարանի մը վերաբերեալ ըլլալուն լաւագոյն կը թուի ինձ խառն Յանձնարարութի մը քննութեան յանձնել, քան թէ առաձինն եկեղեցականի մը:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ձեմ հակառակի որ աշխարհական քննիչ մ'ալ սահմանուի Խորհմեան Սրբազանի հետ միանալու համար, սակայն համարիտ չեմ որ այս պաշտօնը Աղաթօն էֆէնտի յանձնուի վանայ զի՝ հաւաստի կերպով գիտեմ որ վանայ Պատրիարքական փոխանորդին, Երեսփա Եպիսկոպոսի, որ վարժապետանոցի խնդրոյն մէջ դեր ունի, եւ Աղաթօն էֆէնտի միջեւ հակառակութիւն կայ, մինչդեռ քննիչ մը պէտք է որ ամէն բանէ առաջ՝ չէղոք եւ անկողմնակալ լինի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ անկողմնակալ եւ չեղոք անձեր կը վնասուին քննութեան դորժը յանձնելու համար, պէտք է ու-

րեմն յայտարարեմ որ Խորհմեան սրբազանն ալ շատ յարմար չէ այս պաշտօնին, վասն զի դեռ եւս Պօլիսէն չմեկնած՝ զիտողութիւն ըրած է Արարատեան ընկերութեան վարժապետանոցին խնդրոյն նկատմամբ, եւ հետեւաբար չկրնար այս խնդրոյն մէջ իբր չէղոք նկատուիլ, եւ հարկ կը ըլլայ անտեղ ուրիշ քննիչ մը կարգել, որ կատարուէ: չէղոք եւ անկողմնակալ զիրք ունենայ:

ՔԱՆԻ ՄԸ ՆՍԵԱՐԱՆԵՐԷ. — Ճ մարիտ է:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ձեր գիտողութեանը չեմ հակառակի որ փափագեան էֆէնտին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ խնդրոյն վրայ փոքր առ փոքր վիճաբանութիւն մը կարծարծի, եւ դժեղ այնպիսի մանր մանութեանց մէջ կը սուլէ, որոց անուշուրթութիւնը բացարձակապէս վարչութեան հեղինակութեան կը վերաբերի: Ժողովիս համար որ եւ է խնդիր չկայ այժմ, առաջարկութիւն մը կար Արարատեան ընկերութեան բացած դատին ստիպողութիւնը վարչութեան յանձնարարելու մտք, եւ այս առաջարկը յղուած էր առ վարչութիւնն՝ պարտուպատշաճը տնօրինելու եւ արդիւնքը տեղեկագրելու որոշմամբ, բայց ըստ որում առաջարկը խառն էր հարցմամբ՝ Ամեն Սրբազան Պատրիարքը կը կանխէ՝ պաշտօնական գործողութիւնները չաւարտած՝ ծանուցանել ժողովին թէ խնդրոյն քննութիւնն որոշուած եւ յանձնուած է Խորհմեան Սրբազանին: Տեղեկութիւն մ'է այս, որ կը հաղորդուի, հարցման եւ առաջարկութեան հեղինակին անշուշտ հետաքրքրութիւնը զահացնելու համար, իսկ թէ այդ քննութիւնն ինչ եղանակաւ, եւ որո՞ւ միջոցաւ կատարել արժան է, մեզ չվերաբերիր երբէք խնդիր ընել, եւ այս մասին գիտողութիւններ յայտնել, այլ պարզապէս Ազգային վարչութեան գիտնալիք բանն է: Սրդ մենք պէտք է սպասենք քննութեան ելքին, որու արդիւնքն անշուշտ պիտի հաղորդուի ժողովին, եւ այն ատեն ե-

թէ խնդրոյն վրայ գիտողութիւն մ'ունենաք կրնաք ընել, բայց այժմէն ոչ, ուստի պէտք է այժմ այս միջոցէ պը գոցել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ես այս խնդրոյն քննութիւնը Խորհմեան Սրբազանի յանձնած եմ իրեւ իւր արժանեօքը քաջածանօթ եւ համայն ազգին արեւի եկեղեցականի, եւ իբրեւ ազգային գործոց եւ մասնաւորապէս վանայ անցից տեղեկ բարձրաստիճան պաշտօնակալի Ես երբէք տեղեկութիւն չունիմ այդ անցքերէն, բայց կատարեալ վստահութիւն ունիմ Խորհմեան Սրբազանի վրայ, որու խորհրդովն նոյն իսկ Երեսփա Եպիսկոպոսն վանայ Պատրիարքական փոխանորդ անուաներ եւ ժամանակին Խորհմեան Սրբազան շրջա տարի բազմած է այս Պատրիարքական աթոռին վրայ, եւ նա չեմ կրնար կասկածի եւ երկարալութեան ներքեւ թողուլ անոր ճշմարտասիրութիւնն եւ անշուշտութիւնն: Այս խնդրոյն քննութիւնը վանայ մէջ որու ալ յանձնուէր, պիտի կրնային առարկութիւններ ըլլալ քննչին անկողմնակալութեան մասին, որ տեղացի ըլլալուն թերեւս ուղղակի կամ անուղղակի մասնակից համարուէր խնդրոյն, որ այսքան տարածայնութիւն գրգռած էր վանայ մէջ, բայց ես այնպիսի մէկու մը յանձնեցի, որ դեռ նոր կուղեւորէր ի վան, եւ որու Ազգն իւր Պատրիարքական աթոռն վստահած էր:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես չեմ ուզեր այլ եւ խօսիլ այս մասին, եւ Նախագահ Սրբազան չոր խօսքերուն պատասխանել. այլ գիտողութիւններս տեղեկագրին գալուն կը վերապահեմ, յարգանքս յայտնելով Խորհմեան Սրբազանի նկատմամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ դոցուած է այս միջոցէ պը:

5.

Երեսփոխան Մ. Քափամաճեան Էֆէնտիի հարցումը

Երեսփոխան Քափամաճեան Էֆէնտիի կողմէ ուղղեալ յետագայ հարցումը կարգացուցաւ :

Առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր :

Ստոյգ է որ Ղնիոյ կողմերը կաթուղիկութիւնը քաջալերելու համար մէկ երկու հիւպատոսներ ջանքեր նուիրելու են :

Ազգային Երեսփոխան Մ. Գափամաճեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ահաւասիկ պարզ հարցում մը , զոր ըստ կանոնի կը յղենք առ Սրբազան Պատրիարքն , որպէս զի իւր պատասխանը յառաջիկայ նիստին հաղորդելու շնորհն է :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Վարչութիւնն իւր սեղանին վրայ հարիւրաւոր խնդիրներ ունի , եթէ մէն մի խնդրոյ վրայ մասնաւոր հարցումներ տեղի ունենան այսօրէս , ժողովիս բովանդակ նիստն այդ հարցմանց եւ պատասխաններուն ունկնդրութեանը հաղիւ կը բաւէ : Ինչ որ է՝ պատասխանեմ անմիջապէս այդ հարցման Ղնիա՝ Հալէպի կողմերը գիւղ մ'է , ջանքեր կան սաուգիւ տեղւոյն ժողովուրդը կրօնափոխութեան հրապուրելու , սակայն սկսեք եղած միջոցներն ձեռք առնուած են այդ ճիգերն ի դերու հանելու համար :

ԶԱՅՆԵՐ.— Գոհ ենք :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Եթէ խնդիրը

վերջացած է , ես ալ գոհ կըլլամ այս պատասխանէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սրբազան Պատրիարքը փութաց սոյն հարցման առժամայն պատասխանելու , ուստի գոցուած է այս միջադէպը :

6.

Երեսփոխան Մ. Քափամաճեան Էֆէնտիի Երկրորդ հարցումը

Երեսփոխան Քափամաճեան Էֆէնտիի կողմէ ուղղեալ յետագայ հարցումը կարգացուցաւ :

Առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր ,

Ստոյգ է որ Գեր. Սրուանձաեան գիր գրել է Տիգրանակերտ , որպէս զի տեղւոյն ազգայինք իրենց զուակները պապականաց դպրոցները զրկեն :

Եթէ այս մասին որ եւ է տեղեկութիւն չկայ , կառաջարկեմ որ քննութեան ենթարկուի սոյն խնդիրը :

Ազգային Երեսփոխան Մ. Գափամաճեան

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Այս ստորաձայնութեան նկատմամբ պաշտօնական տեղեկութիւն մը հաղորդուած չէ մեզ . միայն լրագրական հրատարակութիւն մը տեսնուել է այս մասին , զոր կարգացողները պատուեցին մեզ եղած տարաձայնութիւնն : Անշուշտ այս գրոյցը պիտի օտուզենք եւ անոր արժէքը հասկնանք :

ԶԱՅՆԵՐ.— Շատ աղէկ :

Հետեւապէս ժողովը կՈՐՈՇԷ յղել հարցումն առ Սրբազան Պատրիարքն :

7.

Երեսփոխան Մ. Քափամաճեան Էֆէնտիի առաջարկը

Երեսփոխան Քափամաճեան Էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկը կարգացուցաւ :

Ուշիոյ ներկայ վիճակին նկատմամբ կառաջարկեմ որ բարեհաճի Ամեն. Ս. Պատրիարքը լիուրի տեղեկութիւն տալ Ազգային ժողովոյս :

Ազգային Երեսփոխան Մ. Գափամաճեան

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Դուք լիուրի տեղեկութիւն կը խնդրէք ինձմէ , բայց ինձ հասած լուրերն այնքան հակասական են որ դեռ ես չեմ կրցած խնդրոյն ամեն պարագայներուն հասու ըլլալ եւ անոր ելքը հասկնալ , բայց կուզէք որ անպատճառ յայտնապէս ըսեմ ձեզ , ինչ որ գիտեմ :

ԶԱՅՆԵՐ.— Ո՛չ , ո՛չ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Բայց խնդրեմ ըսէք ինձ ի՞նչ նշանակութիւն ունին այս հարցումներն , եւ մանաւանդ ինչ դարձան կը բերեն մեր վիճակին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սրբազան Հայր , Երեսփոխաններն ազգային գործոց եւ խնդրոց վրայ շքանազան հրատարակութիւններ կը տեսնեն լրագրաց մէջ , որ իրենց ուշադրութիւնը կը գրաւէ , եւ իրենց պաշտօնին բնութեամբ պարտաւորութիւն կզգան անոնց վրայ հա-

ւաստի տեղեկութիւններ քաղելու , ուստի բնական է որ երբ ժողովի գան , իրաց վրայ կատարեալ ծանօթութիւն ստանալու համար հարցումներ ուղղեն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Բարեկարգ երկիրներու մէջ՝ ուր օրինաւորութիւն կը տիրէ , գործերը կանոնաւոր կերպով կը վարեն , եւ խոստումները կը յարգուին , բայց մեր վիճակըն բոլորովին տարբեր է , ամեն օր լաւագոյն խոստումներ կը տրուին մեր գործոց բարեօրման համար , բայց գործադրութեան մէջ անոնց հակառակը կը տեսնուի , ուստի ինչպէս կարելի է այսպիսի հարցմանց գոհացուցիչ պատասխան տալ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Բաւական ժամանակէ ի վեր հարցում ուղղուած չէր , եւ երբ քանի մը հարցում յաջորդեց իրարու , կարծուեցաւ թերեւս որ դիտուած կայ անոնց ներքեւ : Ոչ երբէք , Հարցմանց հեղինակը Քափամաճեան Էֆէնտին է , որ իբր խմբագիր ի մօտոյ ծանօթ ըլլալով ազգային գործոց , քանի մը հարցում ուղղեց հետաքրքրաբար , որոց արդէն Սրբազան Պատրիարքը պատասխանեց եւ ժողովը գոհ եղաւ : Պարագաներ կան , ուր հարցումն օգտակար է : Հարկը կը պահանջէր բարենորոգմանց խնդրոյն վրայ ալ հարցում ուղղել , որ իւր նշանակութիւնն ունի , բայց առայժմ ամենքս ալ սպասելու վրայ ենք որ Անգղիական կապոյտ տեսրակին հրատարակումն ամբողջանայ եւ կատարելապէս պարզէ մեր առջեւ իրաց ներքին վիճակը : Երեսփոխանք իրաւունք ունին միշտ հարցում ուղղելու , եւ Վարչութիւնը պարտաւորութիւն պատասխանելու : Ասոր մէկ ուրիշ օգուտն ալ սա է՝ որ մենք հարցում ուղղելով եւ Վարչութիւնը պատասխանելով՝ կազատինք երկուստեք ասոյցայ պատասխանատուութենէ :

Սակայն կը փափաքէի որ մեր ներքին գործոց վրայ չըլլային առ այժմ այս հարցումներն , վասն զի մեր առջեւ այժմ Հայկական խնդիրը կայ , որ մեր միակ կենսական խնդիրն է , եւ որու պէտք է նուիրենք մեր բովանդակ ջանքերն եւ ուշադրութիւնը : Կա-

պոյտ տետրակը կարգաւորով ամենքս ալ կրակ կտրած ենք, շատ ըսելիքներ ունինք այս մասին, բայց ինչպէս յայտնեցի, կապասենք ժամանակին:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Եթէ պատասխանատուութիւնէ խուսափելու համար՝ հարցումներ եւ պատասխաններ պիտի փոխանակենք մեր մէջ, գործ տեսնել չէ այս, այլ միայն զմեզ խարենլ: Ես դիտաւորութիւն չունիմ ձեզմէ գործերն սքողելու, բայց կրնաք ըմբռնել որ ամեն ինչ հրապարակաւ չխօսուիր: Եթէ տեղեկութիւն կուզէք, Մասնախումբ մը կը կազմէք, եւ անոր միջոցաւ պէտք եղած տեղեկութիւնները մանրամասնաբար կատանաք: Այսպիսի կէտեր կան խնդրոյն մէջ, որ եթէ հաղորդեմ ձեզ, գո՛ւ չլինիք թերեւս: Ուրիշ խնդրոյն նկատմամբ հակասական տեղեկութիւններ կան, Կիլիկիոյ կաթողիկոսը ծանուցեր էր նախ թէ արքունի տուրքերը զեղչուած, եւ Հայ գայմագամ մը գրուած է, բայց յետոյ կը գրէր թէ՛ տրոց զեղչն ստոյգ է թէ՛ եւ, բայց Հայ գայմագամի ընտրութիւնը կատարուած չէ: Գիտէք նաեւ որ զօրանոցի խնդիր մ'ալ կայ, որ Ձէյթունի մէջ կառուցեալ է վերջերս Տէրութեան կողմէ, Կաթողիկոսը գրած է որ այս զօրանոցը պէտք է մնայ եւ թէ շատ կարեւոր է: Ահաւասիկ այս դիտի վիճակի մը մէջ է խնդիրն, ինչպէ՞ս կրնաք կատարեալ զազափար մ'ստանալ իրաց վրայ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Հարցումն ամէն Երեսփոխանի իրաւունքն է, զոր ոչ ոք կրնայ կապտել, եւ ես որ Սրբազան Պատրիարք Հօր ողին եւ զգացումները քաջ կը ճանչնամ, հաւաստի եմ որ այս իրաւունքը չը ժխտեր, ինչպէս Նորին Սրբազնութիւնն ալ յայտարարեց թէ բան մը սքողել չէ իւր նպատակը: Բայց եթէ Նորին Սրբազնութիւնը նկատումներ ունի, եւ պատշաճ չգատիր ամէն ինչ Հրապարակաւ յայտնել, իրաւունք ունի անշուշտ արդէն ես ալ պնդած չունիմ որ անպատճառ հրապարակաւ տեղեկութիւն հաղորդէ այսօր: Բայց այդ հարցումն ընելու իրաւունք ունէի, վասն զի այս խնդրոյն նկատմամբ գրեր

ընդունած եմ, որ Սոյ կաթողիկոսին ընթացքը հակասական կը նկարագրեն: Ուստի թէ իբր Երեսփոխան, թէ իբր խմբագիր, եւ իբր ազգային անհատ մը վերջապէս, պարտաւորութիւն կըզգամ տեղեկութիւն ստանալու: Գիտենք որ Սրբազան Պատրիարքն այս խնդրոյն մէջ ամէն ջանք եւ զոհողութիւն ի գործ կը դնէ, բայց ազգն ալ այս մասին տեղեկութիւն ստանալու պէտք ունի:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այդ հարցումները գործ տեսնելու չեն ծառայեր, եւ եթէ տեղեկութիւն ստանալու համար է, ինչպէս ըսի, ամէն բան հրապարակաւ կարելի չէ յայտնել: Եթէ գործոց վիճակին տեղեկանալ կուզէք, Յանձնախումբ մը գրէք, որ պէտք եղած քննութիւններն ընէ, ամէն գրութիւն աչքէ անցնէ, եւ ձեզ տեղեկութիւն հաղորդէ:

Ամէն կողմէ լրտեսութիւն կընեն, չարաննոց մեկնութիւններ կուտան ամէն խօսքի, եւ այսպիսի սլարագայից մէջ՝ հարցումներն եւ հրատարակութիւններն ուրիշ օգուտ չունին այլ կեղծումները սաստկացնելու կը ծառայեն: Միւս կողմէ Վարչութեան անդամներն ալ, որ արդէն իրենց անձնական զբաղմանց հետ նաեւ իրենց պաշտօնին հոգն ունին, գծուարութեանց մէջ կը մնան, երբ այսպէս շարունակ հարցումներ ուղղուին, եւ չգիտնալով կը նահանջեն պաշտօնէ: Ահա այս պատճառ էր որ վերջին նիստերէն միոյն մէջ՝ երբ Տելեմաք էֆէնտին Քաղ. Ժողովոյ անդամոց հրաժեշտին շարժառիթը կուզէր գիտնալ, եւ այն պահուն հարցումներ կուղղուէին, դարձայ իրեն ըսի թէ այդ հարցումներն են թերեւս պատճառ հրաժարմանց:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ներկեցէք ինչ որ քանի մը բացատրութիւն տամ ի դիւանէ հարցման եւ հարցապնդման խնդիրներու վրայ եւ անոնց նշանակութիւնը պարզեմ, որպէս զի վերջ գտնէ այն թիւրիմացութիւնն, որ կը տիրէ այս խնդրոյն մէջ եւ մեր ընթացքը կը չփոթէ:

Իւրաքանչիւր Երեսփոխան երբ որ ուղէ՛ ըստ կանոնի իրաւունք ունի որ եւ է խնդրոյ կամ դո՛ւծի վրայ հարցում կամ հարցապնդում ուղղել Ազգային վարչութեան: Այս իրաւունքը՝ համարաւորութեան սկզբունքին յատկանիչն է, եւ Երեսփոխանական պաշտօնին ընտելնէն կը բղխի Սահմանադրական դրութեան մէջ: Իրաւունք, զոր չէ կարելի զանալ Երեսփոխանաց: Բայց այս իրաւունքն այնպիսի թէյութիւններով եւ ձեւի մը ներքեւ ի գործ կը գրուի, որ վարչական գործոց ընթացքին չկրնար շեշտել, եւ Վարչութեան գործելու ազատութեան խափանարար արգելք մը լինիլ: Հարցում կամ հարցապնդում՝ խնդրոյն վրայ անմիջական եւ ուղղակի պատասխան չենթադրեր, այլ կը յղուի որու որ ուղղեալ է, եւ անոր կարծիքը կը խնդրուի գրով, որ եթէ ուղէ՛ ուղղակի հարցման նիւթին նկատմամբ խնդրուած տեղեկութիւնը կամ պատասխանը կուտայ, իսկ եթէ արժան չգատի առժամայն տեղեկութիւն տալ, իւր պատասխանը կը յետաձգէ ետքի:

Այսպէս օրէնքն երբ մէկ կողմէ Երեսփոխանաց հարցման իրաւունքը կը հռչակէ, միւս կողմէ նաեւ հարցապնդեալ պաշտօնէից գիւրութիւն եւ ազատութիւն կընծայէ, որ երբ հարցման նիւթ եղող խնդիրը հասուն չը գտնեն, կամ զանազան նկատումներով պատշաճ չգատին առժամայն բացատրութիւն տալ, պատասխանը կարենան յարմար ժամանակի վերապահել, որպէս զի անտեղութիւն մը չծագի: Այս օրինական ձեւերով երբ ի գործ կը գրուի հարցման իրաւունքը, բնաւ յեշտակար հետեւանք մը յառաջ չբերեր, եւ Վարչութեան անդամք արտնջանաց եւ հրաժեշտի պատճառ մը չեն կրնար ունենալ: Այսպէս ուրեմն, Սրբազան Հայր, ներկայ խնդրոյն մէջ երբ Ձեր Սրբազնութիւնը կը յայտարարէ թէ չէ կարելի հրապարակաւ լիութի տեղեկութիւն հաղորդել, օրինական պատասխան մը տուած կըլլայ, որ ժողովը կը գոհացնէ, ինչպէս գո՛ւ եղաւ նաեւ նոյն իսկ հարցման հեղինակն, որ բնաւ մասնաւոր դիտում մը չունէր այս հարցումն ընելով, այլ տեղեկանալու տեսնէր: Արդէն Ձեր Սրբազնութիւնն մէկ կողմէ այս

յայտարարութիւնը ըրած ատեն, միւս կողմէ որքան կարելի էր, հաճեցաւ ինչ ինչ տեղեկութիւնները տալ խնդրոյն վրայ, ուստի ոչ Մասնաժողով կազմելու հարկ կայ, ոչ քննութեան ենթարկելու խնդիր, եւ ոչ այդպիսի առաջարկ մ'Երեսփոխանի կողմէ: Արդէն միւս անգամ Հայկական խնդրոյն համարատուութիւնը կատարուած է ընդարձակ կերպով, եւ ժողովին հաւանութեան եւ գոհունակութեան արժանի եղած են այն ջանքերն եւ ձեռնարկներն, որ ի գործ գրուած են այս մասին, իսկ այժմ պարզապէս հարցում մ'էր տեղի ունեցածն, որու Ձեր Սրբազնութիւնը պատասխանեց արդէն, եւ բնականաբար կը դոցուի այլ եւս այս խնդիրն:

ԷՆՔԱՅԻՆՏԵԱՆ Տ. ԷՖ. — Պահ մ'առաջ Սրբազան Պատրիարքը դիտողութիւն ըրաւ թէ հարցումները գործ տեսնելու չեն ծառայեր: Այս դիտողութեան սա պատասխանը կուտամ թէ արդէն գործադիր իշխանութիւնը Ազգ. վարչութեան ձեռքն է, եւ այս ժողովը վիճաբանող եւ որոշող մարմին մ'է միայն:

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս յայտարարեցի, սայն խնդիրը վերջացած է, եւ այլ եւս աւելորդ՝ դիտողութիւնները շարունակել:

Հետեւապէս սոյն միջադէպը կը ՓԱՅՈՒԻ եւ ատենական գործողութիւնները կը շարունակեն:

8.

Երեսփոխան Ս. Փափազեան Էֆէնտիի առաջարկը

Երեսփոխան Ս. Փափազեան էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկը կարգացուեցաւ:

Կառաջարկեմ

1. Ազգային կեդրոնական վարչութիւնը Հայաստանի այն քաղաքաց մէջ՝ ուր Եւրոպական հիւպատոսք հաստատուած են, ի Սերաստիա, ի Կարին, ի Վան, ի Տիգրանակերտ, կարգէ Հայ պատուիրակներ (քովիսէր) աշխարհական դասէն ուսեալ, բանիրուն, լեզուազէտ անձինք, որոնց պաշտօնը ըլլայ նոյն աեղեաց Գաւառական վարչութեան և առաջնորդին ընդ հիւպատոսս ունենալիք յարարութեանց միջնորդ լինել, պատահած հարստահարութիւններն ստուգել, վիճակագրութեանց զբաղիլ, տեղական պիտոյից պահանջած բարենորոգումներն ուսումնասիրել, առանց միջամտելու գաւառական ազգային վարչութեան ներքին գործոց :

2. Այս պատուիրակաց 20 էն 30 Օսմանեան ոսկւոյ ամսական վարձք սահմանել, որոյ կէսը վճարուի կեդրոնական սնտուկէն գաւառական այցելուաց սահմանեալ գումարէն, և միւս կէսը նոյն գաւառին վանական սնտուկէն, ի բաց առեալ ընդ հիւպատոսս երթեւեկութեան ծախքերն, զորս պիտի ստանան վանական սնտուկներէն :

3. Արտօնել կեդրոնական վարչութիւնն որ անմիջապէս պաշտօնանկ ընէ այն վանահայրներն, որ սոյն տնօրէնութեան չեն հպատակիր, կամ անոր դէմ դժուարութիւն կը հանեն, նոյնպէս այն առաջնորդներն՝ որ Հայ պատուիրակաց դէմ արգելք կը հանեն, ասոնց դէմ պատուիրակաց դանդաղ, քննութեամբ ստուգելէն յետոյ :

Ներկայ քաղաքական կացութեան

մէջ, առաջարկութեանս ստիպողութիւն տալով :

Մնամ

Ազգային Երեսօխոխան
Ս. Պ. Պ. Փափազեանց

30 Նոյեմբեր 1879

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն առաջարկն ըստ կանոնի պէտք է յղել Նախաքննութեան, Խնդիրը վարչական և օրինական կրկին կէտեր ունենալով իւր մէջ, պատշաճ կը թուի Երաւասութեան և Նախաձեռնութեան միացեալ դիւանաց յանձնել, ուստի եթէ գիտութիւն մը չունիք, այս կերպով կը կատարենք յղումը :

ԶԱՅՆԵՐ. — Շատ ազէկ :

Հետեւապէս առաջարկը կը ՅԴՈՒԻ Իրաւասութեան և Նախաքննութեան միացեալ դիւանաց ի նախաքննութիւն :

9

Աղերսագիր Յ. Չարբեան ԷՖԵՆՈՒԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աղերսագիր մը կայ ժողովիս մատուցեալ, ստորագրութիւնն ըստ կանոնի վաւերացեալ է Մայր եկեղեցւոյ Թագխորհրդոյ կողմէ, և տոմարագրեալ Պատրիարքարանի դիւանատան մէջ, թիւ 14 :

Ահաւասիկ այս աղերսագիրը :

Վսեմաշուք Ատենապետ Տէր
Ազգային Երեսօխոխանական Ժողովոյ :

Տեարք Երեսօխոխանք :

Այն օրէ հետէ, ուր Սահմանադ-

րութիւնը հիմն ունեցաւ Ազգին մէջ, և պատկառելի ժողովդ հանրային շահուց և օրինաց պաշտպան կարգուեցաւ զանազան հայ գաւառներէն, որք իբր ազգային քաղաքացի՝ իւրեանց Երեսօխանն ունեցան ժողովոյդ մէջ, այն օրէնցարդ՝ անծանօթ է ինձ՝ թէ որով պատճառաւ Կիլիկիան քաղաքները՝ Զէյթուն, Հաճըն, Սիս, Ատանա, Տարսոն, Միսիս, Փայաս, Կիւրին, Աշոտ-Տարէնտ, Պէհէան-Ատիաման, Մարաշ, Անթապ, Գիլիս, Հալէպ, Անտիօք, Պիլան և շնչունեցան իւրեանց առանձին աթոռները պատկառելի ժողովոյդ մէջ, և յորս ազգային օրէնն մուտ չգտաւ գրեթէ :

Արդ՝ թոյլ շնորհեցէք ինձ, Տեարք Երեսօխոխանք, որ իբր նախանձախնդիր հայրենական իրաւանց, համարձակիմ խնդրել նոցա ազգային իրաւունքն, գըլխաւորապէս հրաւիրելով Ձեր բարձր ուշադրութիւնն նոցա վերայ Սահմանադրական օրինաց գործադրութեան մասին, զի, Տեարք Երեսօխոխանք, երբ մոռցուին նոցա օրինական և ընտրական իրաւունքներ՝ մոռցուած կը լինի միանգամայն նոցա Հայ-քաղաքակցական իրաւունքն ի ձէնջ, որ ազգն ողջոյն կպատկերէք պաշտօնապէս :

Մնամ խոնարհ ծառայ
Յարուսիւն Յ. Չարբեան
16 Նոյեմբեր 1879
Կ. Պոլիս

(Յետ ընթերցման)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինձ կը թուի թէ այս խնդիրը նախալծուով կրնայ յանձնուիլ Վարչութեան ի գործադրութիւն : Մեր Երեսօխոխանական բաշխման ցանկին մէջ Կիլիկիոյ վիճակները նշանակուած են արդէն, և իրաւ-

ունք կը վայելեն Երեսօխանական ընտրութեանց մասնակցելու . ահաւասիկ ցանկը, ուր նշանակուած կը գտնենք, Հալէպ, Անթապ, Զէյթուն, Մարաշ և ուրիշ Կիլիկիոյ քաղաքներ, որոց Երեսօխանական աթոռները թափուր են, հրաժարմանց պատճառաւ, և հարկ է անշուշտ նոր ընտրութիւն հրամայել Իսկ Սահմանադրութեան գործադրութեան գալով որուն կատարմամբ խնդիր կրնէ աղերսարկուի, ևս կը տեսնեմ որ տակաւին կան նաեւ ուրիշ խել մը գաւառական վիճակներ, որ այս մասին անփոյթ գտնուած և Սահմանադրութիւնն անգործադրելի թողած են ցարդ, խնդիր մը, որ ուշադրութեան արժանի է : Աւստի ես կառաջարկեմ յղել այդ աղերսագիրն Ազգային վարչութեան և յանձնարարել որ ոչ միայն Կիլիկիոյ, այլ այն ամեն գաւառական վիճակաց մէջ, ուր Սահմանադրութիւնը դեռ ևս չէ գործադրուած, փութայ գործադրութեան գընելու, և միանգամայն ընտրել տալու այն Երեսօխաններն, որոց աթոռը թափուր է ժողովին մէջ :

ՔԱՆԻ ՄԸ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — Կը ձայնակցինք :

Հետեւապէս ժողովը նախալծուով կՈՐՈՇԷ այն աղերսագիրը յղել Ազգային վարչութեան ի գործադրութիւն, ըստ առաջարկութեան Փափազեան էֆէնտի :

40

Տիգրանակերտի հեռագիրը

Տիգրանակերտի վիճակէն առ Ազգային ժողովն ուղղեալ յետագայ հեռագիրը կարգացուեցաւ :

(Նոյ. 27 ամսաթուով)

Առ ընդհ. Ժողովն Կ. Պոլսոյ

Առժամանակեայ Ժողովն յուսահատ, հարստահարութիւնք վիճակիս բազմացած, առաջնորդնուս չարեաց արդեւ վերադարձին անորոշ իրաւունքէն զրկեալ, երեք հազար Հայազգիք՝ կրօնափոխութեան դաշնակցեալ, առաջնորդնուս անմիջական վերադարձը թախանձենք, այլ տնօրէնութիւն անօգուտ, հեռագիրնիս վերջնական :

Ի դիմաց Ժողովրդեան ԱԻՆՏԻՍ ՊԱԽԱԼԵԱՆ

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս գիտէք, Տիգրանակերտի դադարեալ առաջնորդը, փրկապոս եպիսկոպոս, ասկէ առաջ Ազգային Ժողովոյ աղերսագիր մատուցած եւ վարչութեան զէմ բողոք բարձած էր զինքը կայտանանկ ընելուն համար : Այս աղերսագիրը Յարաբերութեան զիւանին բովէն միանգամ անցնելէ ետեւ՝ Ժողովն ի վերջէ ստիպուած էր զայն յանձնել Իրաւասութեան զիւանին ի նախաքննութիւն, որու տեղեկագիրը դեռ չընդունած, Տիգրանակերտի գաւառէն սոյն հեռագիրը կը հասնի մեզ, որ փրկապոս եպիսկոպոսի վերադարձը կը խնդրէ ստիպողական կերպով : Այս հեռագիրը ձեր ուշադրութեան կը ներկայացնեմ :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ չեմ յիշար տաներորդ նիստին մէջ էր՝ որ Ժողովն նկատողութեան առաւ Տիգրանակերտի խնդիրը Յարաբերութեան զիւանի տեղեկագրին վրայ : Վիճարանութիւնը դեռ եւս չէր աւարտած՝ երբ ատենը վակելու ժամը հասաւ եւ Ժողովն հարկադրեցաւ յաջորդ նիստին թողուլ վիճարանութեան շարունակութիւնը, սակայն

նոյն նիստին մէջ՝ փոխանակ խնդիրը վերջնապէս որոշուելու, կրկին նախաքննութեան յղուեցաւ, եւ այս անգամ՝ Իրաւասութեան զիւանին :

Ես խօսք խնդրած էի՝ բողոքելու եւ յայտարարելու համար՝ թէ տպօրէն էր արդէն նախաքննուած եւ Ժողովին վիճարանութեան նիւթարկուած խնդիր մը նորէն ուրիշ Դիւանի մը յղել եւ կրկին նախաքննել : Եւ ստուգուելէ այս մասին կանոնական արդեւք մ'աւելլար, ուղիղ բանի հակառակ էր այսօրիսի գործողութիւն մը, սակայն անստիպանօք այնպէս եղաւ :

Արդ քանի որ գաւառէն այսօրիսի ծանրակշիւ հեռագիր մը կուգայ, եւ խնդիրը ըստիպողական կերպարան մը կ'առնու, կ'առաջարկեմ որ այսօրու ընէ Ազգային Ժողովը նկատողութեան առնու զայն, եւ որոշում մը տայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ի մօտոյ տեղեկութիւն ունիմ, որ Յարաբերութեան զիւանին շարունակ նիստ ընելով՝ խնդիրը քննելու եւ ուսումնասիրելու կ'ընթացի, եւ Դիւանատունէն սոյն խնդրոյն վերաբերեալ գրութիւնները խնդրած է : Անշուշտ իւր աշխատութիւնն աւարտելէ ետեւ՝ պիտի մատուցանէ իւր տեղեկագիրը, զոր Ժողովն ստանալով կուտայ իւր վճիռը :

Ասկէ զատ՝ եկած հեռագրին ըստ իս կարեւորութիւն չունի, վասն զի մասնաւոր անհատի մ'ստորագրութիւնը կը կրէ, որ հազարաւոր Ժողովրդեան անունովը կը խօսի մեզի հետ : Աւստի պէտք չէ որ այդ հեռագիրը մեզ վրդովէ, եւ զբաղման նիւթ ըլլայ : Կ'առաջարկեմ ուրեմն սպասել Իրաւասութեան զիւանի տեղեկագրին, եւ Օրակարգն անցնիլ :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ գիտեմ որ Իրաւասութեան զիւանը խնդիրն ուսումնասիրելու վրայ է, եւ անոր վերաբերեալ գրութիւններ եւ տեղեկութիւններ ուղարկելու Պատրիարքարանի Դիւանատունէն, բայց չեմ կարծեր որ այն հեռագրէն զատ, որով փրկապոս եպիսկոպոսի անկումը պահանջեր էին

Տիգրանակերտի հայ պատուիրակներն, ուրիշ որ եւ է զիր կամ տեղեկութիւն կարենայ զըտնել :

Նմեադրելով սակայն որ ուրիշ գրեր ալ ըլլան, տակաւին Յարաբերութեան զիւանը զանոնք աչքէ անցնելու համար երկու ամսոյ պէտք չունէր, եւ չեմ կարծեր որ տեղեկագիր բերէ մեզ այսքան յապաղումէ ետեւ, որ առիթ կուտայ մեզ կասկածելու եւ զժողովուրդ :

Փափաղեան էֆէնտին կ'առարկէ թէ հեռագիրը մասնաւոր անձէ մ'ստորագրեալ է, եւ կարեւորութիւն չունի : Սակայն պէտք է զիանալ որ Տիգրանակերտի Ազգային Ժողովները բոլորովին դադրած են, եւ այդ հեռագրէն զատ՝ ուրիշ հեռագրեր եւ հանրագրեր կը տեղան այս օրերս Պատրիարքարան : Սոյն խնդրոյն համար, ուստի Ազգային Ժողովը պարտաւոր է նկատողութեան առնուլ զայն : Խնդիրը հետզհետէ փափուկ վիճակ մը կ'առնու եւ քաղաքական տեսակետով ալ մեծ կարեւորութիւն ունի, ուստի, կը կրկնեմ, պէտք է այսօր նկատողութեան առնուլ :

ՖԷԼԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Կը ձայնակցիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ Երեսփոխան մ'առաջարկէ Ժողովին՝ ստիպողութիւն ընծայել այս կամ այն խնդրոյն, հարկ է որ ստիպողութեան պէտքը ցոյց տայ իւր պատճառներովը եւ հաստատէ, որպէս զի Ժողովը կարենայ իւր որոշումը տալ : Քափամաճեան էֆէնտին առաջարկեց որ Ժողովն ստիպողութիւն տալով Տիգրանակերտի խնդրոյն, զայն նկատողութեան առնու այսօր, եւ իւր այս առաջարկութեան զխաւորաբար պատճառ նշանակեց թէ Իրաւասութեան զիւանն՝ որու յղուած է խնդիրը երկու ամսէ ի վեր, իւր տեղեկագիրը չէ տուած, եւ թէ այլ եւս զրկելիք չունի եւ հետեցուց թէ չկրնար սպասուիլ տեղեկագրին զալուն, զի խնդիրը ծանրակշիւ է, եւ թէ պէտք է անմիջապէս նկատողութեան առնուլ զայն :

Կարծեմ առաջին անգամ չէ որ Նախա-

քննիչ զիւանի մը յանձնուած խնդրոյ մը տեղեկագրին երկու ամսէ ի վեր կը յայտադրուի, կան դեռ ուրիշ կարեւոր խնդիրներ, որ նախաքննութեան յանձնուած են, սակայն ցարդ Ժողովն չեն մատուցեալ անոնց տեղեկագրերը :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես կը կարմրիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Շարունակելով) — Մեր գործող մեքենային մէկ թերութեան հետեւանքն է այս, բայց ինչ որ ալ լինի, չկրնար ըսուիլ թէ՛ ըստ որում Իրաւասութեան զիւանը երկու ամսէ ի վեր իւր տեղեկագիրը չէ բերած, պէտք է որ Ժողովը խնդիրն իբր ըստիպողական ուղղակի նկատողութեան առնու : Ասկէ զատ՝ կը փութամ տեղեկութիւն տալ ձեզ, որ անցեալ նիստին մէջ՝ ընդհանրապէս նախաքննութեան յանձնեալ խնդիրներուն երկարաձգման վրայ գիտողութիւն ըլլալով՝ փութացի իբր Ատենապետ՝ նաեւ Իրաւասութեան զիւանին հետ ըստակցել այս մասին եւ յանձնարարեցի որ իւր տեղեկագիրը փութացնէ, լսեցի որ Դիւանն ալ այս խնդրով կ'ընթացի եւ անոր վերաբերեալ գրութիւններուն կ'սպասէ, որ իւր աշխատութիւնն աւարտէ : Այս վիճակին մէջ է գործն եւ հիմա Ժողովին կը մնայ որոշել թէ կուզէ այս հեռագրին առիթ ըստ առաջարկութեան Քափամաճեան էֆէնտին՝ ստիպողութիւն տալ խնդրոյն, եւ զայն նկատողութեան առնուլ, թէ ոչ կ'սպասէ որ Իրաւասութեան զիւանն իւր աշխատութիւնն աւարտէ եւ արդիւնքը տեղեկագրէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ստիպողութիւնը պէտք էր վարչութիւնը առաջարկած ըլլար, բայց նա այս տեսակ առաջարկ մ'ըրած չէ մեզ :

ՉԱՅՆԵՐ. — Քուէի դրէք ստիպողութիւնն :

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրը, եւ Ժողովն 11 քուէի

ընդդէմ՝ 21 քուէով խնդրոյն ստիպողութիւն ընծայելով ԿՈՐՈՇէ՛ անանց Իրաւաւ ստիպեան դիւանին տեղեկագիրին սպասելու ։

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Հիմա որ ժողովը խընդարոյն ստիպողութիւն ընծայեց ։ կը հրաւիրեմ ատենաքանները խօսք առնուլ ։

ՊԵՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ.— Այս խնդիրը հետըհետէ զարմանալի կերպարանք մը կառնու ։ Գաւառ մ'ազգային պատուիրակներ կերթան ։ Քիչ մ'ետեւ Ազգային վարչութեան կողմէն հրատարակած հրատարակ կերթայ ։ առաջնորդին ։ եւ խռովութիւնք ու կռիւնք տեղի կուենան զաւառին մէջ ։ Հրատարակեալ առաջնորդն Պոլիս կուգայ եւ բողոք կը բառնայ Ազգային ժողովոյ առջեւ ։ որ խնդիրն ի նախաքննութիւն կը յէջ Յարաբերութեան գիւլանին ։ Սակայն Յարաբերութեան Գիւլանն՝ փոխանակ լոյս սփռելու խնդրոյն վրայ՝ աւելի մտք կը դիրքէ անոր բոլորովն իւր ազատ անգոյն եւ երկգիրմ տեղեկագիրով ։ Դէկ կողմէն սա՛ կ'արդարացնէր զՎարչութիւնն՝ ֆիլիպպոս եպիսկոպոսը հրատարակեցած լինելուն համար ։ միւս կողմէն դատաստան կը յանձնարարէր իրին քննութեան համար ։ որոյ արդեամբ Վարչութիւնը կրնար յանցաւոր ելնել ։ Հակատութիւն ։ Այս միջոցին Վարչութիւնն ալ մի խորհրդաւոր լուծութիւն կը պահէ եւ կըզուշտանայ որ եւ է բացատրութիւն տալէ իւր ընթացից վրայ ։

Բայց երեսփոխանք անգործ չեն կենար ։ կը տեղեկանան ։ եւ մեր առջեւ կը ներկայանայ ֆիլիպպոս եպիսկոպոս իբրեւ բարի մարդարթուն եւ ազգասէր առաջնորդ ։ Ազգային իրաց այս փափուկ փիճակին մէջ՝ հասկնալով իւր պարտքն ու ժամանակին պահանջունն՝ ըրած է ինչ որ՝ կրնար ընել պաշտպանելու համար իւր ժողովրդեան իրաւունքներն եւ արդարութիւն եւ բարեկարգութիւն խնդրելու ։ որ իւր բարոյական ազդեցութեամբն պատկառանք ազգած է մեր ազգին ամենէն արիւնաուշտ ղիւնըմբերուն անգամ ։ այն է քրթեւուն ։ եւ զըստած է զայն ։ Այս ատեն նաեւ լրագրաց է-

Չերք կը ընեն իւր փիճակէն հասած գրեր ։ հետադրեր ։ որ միաձայն առաջնորդը կը խնդրեն կրօնափոխութեան սպառնալեօք եւ տխուր նկարագրեր կը բերեն ազգային գործոց կացութեան ։

Այս ատեն իրողութեանց դիմաց ։ որ ի նպաստ ֆիլիպպոս եպիսկոպոսի կը խօսին ։ եւ որք կը հաստատեն իւր անձին պաշտպանութեան համար լրագրաց մէջ իւր կողմէ հըրատարակած գրութիւններն ։ ինչ կայ հրատարակի վրայ ։ — ոչ այլ ինչ՝ եթէ ոչ Յարաբերութեան գիւլանին ազատ ու անգոյն տեղեկագիրըն ։ Վարչութեան լուծութիւնն ։ եւ Գեր. Սըրուանձտեանցի եւ Պոյաճեան էֆէնտի տեղեկագիրն ։ սր խռովութեան հեղինակ կը հըրտաւակէ զֆիլիպպոս եպիսկոպոս ։ բայց այս վերջին տեղեկագիրն իսկ արժէքը կը հասկցուի ։ երբ նկատենք սա երկու կէտերն թէ՛ Գեր. Սըրուանձտեանց ուրիշ տեղեր ալ շատ սաք ընդունելութիւն չէ գտած ։ ստոյգ աղբիւրէ կը տեղեկանային անցեալ օր որ Խարբերդի մէջ ալ իւր ներկայութիւնը յուզում յարուցեր է ։ եւ երկրորդ թէ՛ խռովութիւնն առաջնորդին հրատարակած յաջորդած է ։ ոչ թէ՛ հրատարակման խռովութեան ։ որով չէ կարելի հրատարակման պատիժ համարել խռովութիւն պատճառած ըլլալուն փոխարէն ։ Նոյն իսկ այս խռովութեան կէտը քննելով կը տեսնենք որ Վարչութիւնը մեծագոյն բաժին մ'ունի անոր պատասխանատուութեան մէջը ։ Գիտենք ամէնքըս որ Գեր. Սըրուանձտեան գեո չմկնած՝ Տիգրանակերտէն հեռագիր հեռագրի վրայ եկաւ հո՛ Գարեգին վարդապետի քննիչ ընտրուած ըլլալուն դէմ բողոքելու համար ։ Տիգրանակերտցիք չէին ուզեր զայն ։ որ անցեալ տարի ալ այցելեր էր իրենց փիճակն ։ բայց Վարչութիւնն իւր որոշման վրայ պիտի կեցաւ եւ զԳարեգին դրկեց ։ եւ անա տեսնուեցաւ թէ՛ ինչ եղաւ արդիւնքն Վարչութեան պարտքն էր կարծեմ ։ հեռատես եւ չըջահայեաց ըլլալ ։ եւ սպազայ յուզմանց երկրիւղով չըրիլ մէկն այնպիսի տեղ մը ։ որ չեն ուզեր զայն ։ Կը հարցնեմ թէ՛ Վարչութեան չի՛ վերաբերիլ տեղի ունեցած խռովութեանց պատասխանատուութեան մի մեծագոյն մասն ։

Իրաց այս փիճակին մէջ ֆիլիպպոս եպիսկոպոս զոնի կերպարան կըզենու ։ կարդարանայ եւ մեր համակրութիւնը կը զբաւէ ։

Աւստի նկատելով նաեւ Տիգրանակերտի մէջ ազգային գործոց փիճակէն խնդրոյն ստացած ստիպողականութիւնը ։ կառաջարկեմ որ ։ որովհետեւ Ս. Պատրիարքն այս վարչական տրնորէնութեան մէջ մասնակցութիւն չէ ունեցած ։ եւ զի վատահ ենք Նորին սրբազնութեան ազգին շահերն ու ժամանակին պիտոյքը քաջ կշռելու կարողութեան վրայ ։ Ազգ. ժողովը համակիր տրամադրութեանց տակ յանձնարարէ անոր զֆիլիպպոս եպիսկոպոս ։ որպէս զի Նորին սրբազնութիւնը տնօրինէ զարժանն ։

ՇԱՀԱՍՁ Ն. ԷՖ.— Տիգրանակերտի խնդիրն ստուղիւ նկատողութեան արժանի է ։ Վարչութիւնն առաջնորդը զաղբեցուցեր է պաշտօնէ ։ եւ այս տնօրէնութեան դէմ պարտաւ առաջնորդը բողոք կը բառնայ ։ Կարելի է որ բողոքարկուն իրաւունք ունի ։ եւ Վարչութիւնը սխալ մը գործեր է ։ բայց ինչպէս պէտք է յայտնուի ճշմարտութիւնն ։ անշուշտ օրինաւոր քննութեամբ ։ Այսպիսի քննութիւն մը կատարուած է ցարգ ։ — ոչ ուստի չեմ կարծեր որ առանց հասու ըլլալու իրաց ստուգութեանը ։ միայն պարագաներէն դատելով գործն իրաւունք ունենանք վճարար ըսելու թէ՛ Վարչութիւնը սխալ քայլ մ'առած է ։ թէ Տիգրանակերտի Հայ պատուիրակաց ամբաստանութիւնն անտեղի է ։ եւ թէ՛ ֆիլիպպոս եպիսկոպոս անպարտ է ։

ՊԵՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ.— (Ընդմիջելով) Բայց Վարչութիւնը լուր է այս խնդրոյն մէջ ։

ՇԱՀԱՍՁ Ն. ԷՖ.— (Շարունակելով) Վրճիո մ'առանց քննութեան եւ դատաստանի կանխահաս է միշտ ։ եւ արդարութեան հակառակ ։ եթէ ժողովը կուզէ օրինաւոր լուծում մը տալ խնդրոյն ։ ըստ իս չբաւեր նոյն իսկ նախաքննիչ գիւլանի մը տեղեկագիրը ։ այլ ուրիշ է դատական Մասնաժողով մը

կազմել ։ որ ուշի ուշով քննէ խնդիրը եւ վրճիո մը տայ որ գործադրուի ։

Ք Ա Մ Ա Ճ Ե Ա Ն Մ. ԷՖ.— Տեառք երեսփոխանք ։ անոնք որ կը կարծեն թէ՛ Տիգրանակերտի խնդիրը ֆիլիպպոս եպիսկոպոսի անձնականին վերաբերեալ խնդիր մ'է ։ մեծապէս կը սխալին ։ վասն զի պարզապէս ազգային դատ մ'է այս ։ որ վոքը ի շատէ քաղաքական հանգամանքներ ունի ։ եւ չէ թէ՛ ներքին կուռուցական վեճերու արդիւնք մը ։ ներեցէք որ բացատրեմ ։

Քաջ կը յիշեմ որ ասկէ եօթն ութն ամիս առաջ Բ. Կոնստն Պատրիարքարան ծանուցադիր մը դալով ֆիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնանկութիւնը կը պահանջէր ։ Արքայան Պատրիարքն այն ատեն այս ծանուցադրին պէտք եղած պատասխանը տուաւ ։ եւ ֆիլիպպոս եպիսկոպոսն իւր պաշտօնին մէջ պահեց ։

Կան արդարեւ Տիգրանակերտի ազգայնոց մէջ առաջնորդին հակառակորդներ ։ բայց անոնց գանդատներն իրաւացի են ։ թէ ոչ թեւ լազրութեան արդիւնք ։ դիւրին է ըմբռնել ։ բաւական է որ անոր անկման համար եղած պահանջումը յիշենք ։ Բայց ինչպէս եղաւ վերջապէս որ ֆիլիպպոս եպիսկոպոս պաշտօնէ ինկաւ ։ հետաքրքրական է այս պարագան ։ Երբ Գարեգին վարդապետ Սըրուանձտեան Պոյաճեան էֆէնտի հետ Տիգրանակերտ կուղերէր ։ իբր ազգային պատուիրակ բարենորոգմանց խնդրոյն համար ։ վիճակային ժողովուրդը կանխեց հեռագրով ծանուցանելու Վարչութեան թէ՛ Գարեգին վարդապետ ։ որ նախորդ տարին դարձեալ այն կողմերն յուղարկուեր էր ուրիշ պաշտօնով ։ առաջնորդի խնդիր յարուցած լինելուն անոր դալուտան եւ ներկայութիւնը չուզեր Տիգրանակերտի մէջ ։ Այս հեռագիրն եկած ատեն Սրբազան Պատրիարքը բացակայ էր իւր աթոռէն ։ եւ Նորին Սրբազնութեան կը փոխանորդէր Մատթէոս եպիսկոպոս Խզմիրլեան ։ որ այդ հեռագիրն պատասխանեց ծանուցանելով թէ՛ Գարեգին վարդապետ պատուիրակի պաշտօն ունէր ։ եւ իրեն չէր վերաբերիր միջամուխ ըլլալ առաջ-

նորդական և ուրիշ ներքին խնդիրներու Գոհացուցիչ էր այս պատասխանն և պատուիրակները մեկնեցան ։ Բայց այն ինչ հասեր էին ի Տիգրանակերպ , և ահա ապիկ Գարեգին վարդապետ կսկսէր առաջնորդի խնդիր յուզել , և յանկարծ կը հեռագրէր ի Պոլիս , անշուշտ իւր պաշտօնակցին հետ , թէ քանի որ Փիլիպպոս եպիսկոպոս մնար իւր պաշտօնին մէջ , անհնար էր գործել ։ Այս մտօք հեռագիր մ'ալ կուգար Խարբերդի առաջնորդին համար ։ Չմոռնանք յիշելու որ ասկէ քիչ ժամանակ առաջ Բ. Գոհէն երկրորդ ծանուցագիր մ'ալ եկած էր , որ Փիլիպպոս եպիսկոպոսի անկման պահանջումը կը կրկնէր ։ Գծրագրաբար Արքայան Պատրիարքը բացակայ կը մնար դեռ , և ահա ապիկ Փիլիպպոս եպիսկոպոս այս պահուս Կարչութեան կողմէ աճապարանօք պաշտօնէ կը ձգուէր և Պոլիս կը կոչուէր ։ Ի հարկէ Կարչութիւնը վստահութիւն պէտք է ունենայ իւր պատուիրակաց վրայ , և չեմ մեղադրեր զինքն երբ անոնց խնդիրը գործադրէ , թէ և այս ալ մինչեւ աստիճան մը կրնայ ըլլալ ։ Սակայն պէտք էր որ Կարչութիւնը բացատրութիւն պահանջէր պատուիրակներէն թէ ինչ պատճառներու և նկատմանց համար Փիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնակցութիւնը հարկ տեսեր էին ։ Այո , պատուիրակը պարտաւոր էին մեկնել իրենց առաջարկութեան շարժառիթն , և տեղեկագիր մատուցանել Կարչութեան ։ Հաւաստի կերպով զիտեմ որ ոչ Կարչութիւնն այդպիսի տեղեկագիր մ'ուղեց , և ոչ պատուիրակները մատուցին զայն ։ Կայ արդարեւ տեղեկագիր մը , բայց այս էական կէտին վրայ լուս' կը նկարագրէ միայն թէ ինչ անցքեր անցեր էին Փիլիպպոս եպիսկոպոսի անկումէն ետեւ , և թէ ինչ յուզմանց և խռովմանց մատուցէր էր վիճակը ։ Այո , ժողովուրդը վրդովեւ էր , չէր ուզեր իւր սիրելի առաջնորդէն բաժնուիլ , և ցոյցեր եղեր էին սպանալի ։ Իրաւունք ունէր թէ չէ այդպէս ընելու , այդ ուրիշ խնդիր , բայց ժողովուրդն ինչպէս լուս' Տեարք երեսփոխանք , երբ տեսնէ թէ իւր առաջնորդն , իւր քաջարթուն հովիւն , որ իւր լուսնակ պաշտօնավորութեան մէջ աղքատին , և զրկելոյն իրաւունքները պաշտ-

պաներ է , որ եւրոպական հիւպատոսաց առջեւ աղղին շահերը պաշտպաներ է սրժանապէս , որու համար՝ քաղաքակից ազգաց վեց առաջնորդներն դեռ քանի մ'օր առաջ զոհուակութեան հեռագիր ուղղեր էին ի Պատրիարքարան , այսպէս կիյնայ պաշտօնէ ։ Միթէ յանցանք էր ժողովրդին իւր առաջնորդին վարել , միթէ այդքան անզգայ է , որ իւր օգտին գիտակցութիւնը չունենար , և իւր բարեկամը չկարենար ճանչնալ , որ Փիլիպպոս եպիսկոպոսի վրայ կը բեռնաւորեն յուզմանց պատասխանատուութիւնն և իւր թելադրական կը հռչակեն ժողովրդական այդ ցոյցերուն ։

Կերջապէս խնդիրն որ տեսակէտէն ալ նկատենք , Փիլիպպոս եպիսկոպոս զոհ մ'է , զոհ ազգային , զոհ քաղաքական , և այս մեծ ժողովին պարտքն է զայն պաշտպանել , պաշտպանութիւն , զոր եթէ զլանայ , այլ ևս ժողովուրդն որմը վրայ դնէ յոյսը ։ Փիլիպպոս եպիսկոպոս իբրև մարդ շատ թերութիւններ կրնայ ունենալ , անկարելի չէ այս , բայց , Տեարք երեսփոխանք , ձեռքերն իս մեր խղճին վրայ դնենք , և տեսնենք թէ արդեօք մը առաջնորդն անբազիւտ է , և զերծ ամէն թերութենէ ։ Ահա ապիկ Կարնոյ Յարութիւն եպիսկոպոսը քսան երկու տարիէ ի վեր՝ առաջնորդական պաշտօն կը վարէ , բայց ի՞նչ ծառայութիւն մատուցած է վիճակին . — Այնչ ժողովրդեան յառաջդիմութեանը համար ըզրոյն անտարբեր , ազգային վարժարաններն անխնամ թողած , որ և է արդիւնք մը յառաջ չբերաւ ։

Այս այն առաջնորդն է որ երբ պատերազմի արհաւիրաց տեսն' Արքայան Պատրիարքն ամէն վտանգ աչքն առնելով զաւանդները կոնդակներ կը հանէր , պատուիրակներ կուղարկէր ժողովուրդը յարդորելու որ իրենց հայրենի բնիկ երկրէն այլուր չգաղթեն , այս այն առաջնորդն է կըսեմ որ մինչեւ իսկ կ'համարձակէր եկեղեցւոյ մէջ Պատրիարքական կոնդակին ընթերցումն արդելու , և Վեհ. Կաթողիկոսին հետ կը թղթակցէր զտղթակամութիւնը զլուրելու համար ։

ԲԱՅՄԱԹԻ ԶԱՅՆԵՐ (Ընդմիջելով) . — Խնդրէն դուրս են այդ խօսքերը ։

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Ատենաբանն իրաւունք չո՞ւնի միթէ քաղաքապետութիւններ ընելու և յարացոյցներ մէջ բերելու ։

(աղմուկ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հանդարտեցէք կազաչեմ , և Գիւանին թողէք իւր պաշտօնը կատարել ։ Գուք ալ Քափամաճեան էֆէնտի , չնորհ ըրէք ի խնդիր դառնալ , այդ խօսքերն աւելորդ են ։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Խնդրէն չեմ շեղած , և սա կուզեմ հաստատել թէ Փիլիպպոս եպիսկոպոսէն շատ աւելի թերութիւններ ունեցող և աղղին մնասող առաջնորդներ կան ։

(Կրկին ընդմիջմունք . Ատենաբանը կըստիպուի լուս')

ՈՒՐԻՇ ԶԱՅՆԵՐ . — Շարունակեցէք ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժամանակը սուղ է Քափամաճեան էֆէնտի , խնդրոյն վրայ խօսեցէք և կըրակացուցէք ձեր խօսքը ։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Դեռ չէ մոռցուած Երեսփա եպիսկոպոսի ընթացքն և արարքներն ազգային գործոց մէջ , բայց ես չեմ ուզեր այս խնդրոյն առթիւ շատ ծանրանալ ուրիշներու վրայ և զանոնք ամբաստանել ։ Իսկ Փիլիպպոս եպիսկոպոսն որ անձնուէր հովիւ մ'է իւր հօտին , քառասուն յիսուն աստիկանով կարտաքսուի իւր վիճակէն ։

Կարդացէք , Տեարք , կարդացէք Արուստձատեանի տեղեկագիրն , զոր Հայրեցիք հրատարակեց , այս անցքերը կը պատմէ յայտնելով թէ քանի զէպքերը կը յաջորդէին Տեղական կառավարութիւնը զոհ կը լինէր ։

ԶԱՅՆ ՄԸ. — (Ընդմիջելով) Գուցէ և ինքն ալ ։

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Այո , նոյն իսկ պատուիրակներն ալ զոհ կը լինէին թերեւս ։ Վերջապէս պէտք է քննութիւն և դատաստան լինի , բայց ոչ հոս , այլ դաւառին մէջ , ուստի կատաղարկեմ որ Փիլիպպոս եպիսկոպոս Տիգրանակերպ զրկուի որ քննութիւնը կատարուի , և ըստ այնմ տընորինուի ինչ որ արդարութիւնը կը պահանջէ ։ Կարծեմ Պէրպէրեան էֆէնտին ալ կը համաձայնի ինձ այս մասին ։

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Խօսք կուղեմ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թե՞ր պիտի խօսիք թէ դէմ , չնորհ ըրէք յայտնել նախ ։

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Մինչեւ ցարդ ազգային ժողովոյ մէջ խօսելու բարեազդութիւնը չեմ ունեցած , երկու խօսք ունիմ և կը հարցնէք թէ ի՞նչ պիտի խօսիմ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս հարցումը թող չը վիրաւորէ զձեզ , կանոնը կը պահանջէ որ փոխասաց կարգաւ խօսուի թեր ու դէմ , և այս պատճառաւ ըրի այդ հարցումը ։

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Շահալ էֆէնտի խօսքին մէջ , սխալ մը կար , զայն պիտի ուղղեմ ։ Գիտողութիւն կընէ թէ պէտք է դատաստան ըլլայ նախ և այնուհետեւ պէտք եղածն ի գործ դրուի ։ Կարծեմ այդ դատաստանը չեղած՝ Փիլիպպոս եպիսկոպոս հոս կոչուեցաւ հեռագրով , և այնուհետեւ վիճակը վրդովեցաւ . այնպէս չէ՞ ։

ԶԱՅՆԵՐ . — Այո , այո ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանը խնդրոյն պարզաներուն վրայ որ և է պաշտօնական տեղեկութիւն չունի , ձեր կարծիքն ըսէք միայն ։

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Այս զէպքերէն ի վեր տասը քսան ամիս ան-

ցած չէ, կրնանք զիտնալ կարծեմ: Իմ ունեցած տեղեկութիւնս այս է որ Փիլիպպոս եպիսկոպոսը Պօլիս կոչող հեռագրին երկրորդ հեռագիր մ'ալ յաջորդեց որ մնայ հոն:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Բան մը չգիտեքն սպառնապէս:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Հինգ տարուան մէջ մի անգամ խօսք առի, այն ալ չէք թողուր սր շարունակեմ: Ես քանի մը դիտողութիւն պիտի ընեմ միայն: Գարեղին վարդապետն ազգին համար, ամենուս համար սիրելի անձ մ'է, ուրիշներու պէս վանքին անկիւնը նստած ծուլութեամբ ժամանակ չէ անցուցեր, այլ աշխատեր է: Բայց այս պարագայիս մէջ նստալ մը գործեր է, Փիլիպպոս եպիսկոպոսի անկումը պահանջեր է, եւ հեռագրով հրաման գացեր է Վարչութեան կողմէ որ Պօլիս գայ, երկրորդ հրաման մ'ալ գացեր է, որ մնայ:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) — Եթէ յանցապարտ էր Փիլիպպոս, ինչ կընչանակէր այդ երկրորդ հեռագիրը:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Բայց պատասխան եկեր է որ Փիլիպպոս եպիսկոպոս ճամբայ ելած է արդէն, եւ առանց քննութեան եղեր են այս ամէնը: Այժմ վիճակը վերի վայր եղած է, եւ պէտք է այս խնդիրը կարգադրել եւ վերջացնել, կրօնափոխութեան սպառնալիքէն վախճալուս համար չէ որ այսպէս կըսեմ, վասն զի տղայական բան մ'է այս, բայց այս վիճակին հետեւանքը կը ծանրանայ, եթէ խնդիրը տակաւին ամիս մ' երկու երկարածգի: Ես Փիլիպպոս եպիսկոպոսի համար ալ չափազանց ներքոններ չեմ ընել, դուք ալ մընէք որ չԸլայ թէ օր մ'ալ զանոնք ետ առնենք: Իւր պաշտօնը կրնայ ըստ կարելոյն կատարել, իրողութիւններն ալ ցոյց կուտան որ անմեղ է, ուստի ես ալ կը համաձայնիմ որ Փիլիպպոս եպիսկոպոս իւր վիճակը վերադառնայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ Պէր գէրեան էֆէնտիի առաջարկութեանը կը յարիք, հարկ կը համարիմ յիշեցնել որ անոր առաջարկութիւնն էր՝ համակիր տրամադրութեանց տակ յանձնարարել զՓիլիպպոս եպիսկոպոս Սրբազան Պատրիարք Հօր, որ զարժանն ի գործ դնէ այս մասին:

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ. — Ես այդ եղանակն անորոշ կը գտնեմ, խնդրոյն վրայ բաւական տեղեկութիւն առնուած է զայն վերջնապէս կարգադրելու համար, եւ իմ կարծիքս այն է որ Փիլիպպոս եպիսկոպոս իւր վիճակը վերադարձնելու պայմանաւ պէտք է խնդիրը յանձնարարել Սրբազան Պատրիարք Հօր:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Եթէ խնդիրն անորոշ կերպով ինձ յանձնուի չեմ ընդունիր վասն զի խնդիրը ծագած ատեն իմ հրահանգներս մտիկ չըրին եւ հոս հասուցին գործը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՞վ մտիկ չըրաւ:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Ես ոչ Փիլիպպոս եպիսկոպոսը կամրատանեմ եւ ոչ կը ջատագովեմ, վասն զի անտեղեկ եմ Տիգրանակերտի եղելութեանց, այլ սկզբունք մը միայն կը սպառնալեմ: Այսօր դուս մը կայ մեր առջեւ, վարչական անօրէնութիւն մը կայ, եւ անոր դէմ բողոքարկու մը, ըսել է ամբաստանութիւն մը կը ըլլայ, թողոյն այսպիսի խնդրոյ մ'առջեւ ուրիշ բան չէ կարող ընել, այլ զատական Մասնախումբ մը կազմել, եւ անոր քննութեան յանձնել խնդիրը: Եթէ գաւառին յուզմունքը զիտնելով, եւ եղելութիւնն հասկնալու անփոյթ գտնուելով, որոշում մը տանք Փիլիպպոս եպիսկոպոսին իւր վիճակը վերադարձնելու, պէտք է զիտնանք որ վճիռ արձակած պիտի լինինք թէ Փիլիպպոս եպիսկոպոսն յանիրաւի սպառնանիկ ըրեր են: Գատական Մասնախումբ մը պէտք է այսպիսի վճիռ մը մեղ բերելու համար, բայց եթէ Ազգ. ժողովն ինք զատուորի դեր պիտի կատարէ, ատոր ըսելիք չունիմ:

ԲԱՐԱՔԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Համակիր մեծամասնութիւն մը կը տեսնեմ թողովիս մէջ Փիլիպպոս եպիսկոպոսի տարապարտ սպառնէ ինկած ըլլալը վճռելու: Եթէ Վարչութիւնըն այս համակրանաց դէմ դնելու համար քննութեամբ ապացուցուած ծանրակշիռ իրողութիւններ ունի երեւան հանելիք, այդ ուրիշ խնդիր, բայց քանի որ չկայ, ինչպէս կը լսուի որ միայն հեռագրի մ'ազօտ տեղեկութեանց վրայ դատաւարտուած է Փիլիպպոս եպիսկոպոս, կրնանք այժմէն անմեղ հրատարակել զայն, առանց մանրակրկիտ քննութեանց մտնելու եւ Վարչական մարմնոյն վրայ ծանրանալու:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նախընթաց նիստերու մէջ երկու անգամ առիթ ունեցայ արդէն այս խնդրոյն վրայ իմ կարծիքս յայտնելու, եւ խնդիրը նորէն ձեռք առնելու համար, պէտք էր որ այսօր Իրաւասութեան դիւանին տեղեկագիրը գտնուէր մեր սեղանին վրայ, սակայն թողովը չուզեց սպասել այդ տեղեկագրին, եւ ստիպողութիւն տալով խնդրոյն ուզեց նկատողութեան առնուլ զայն Այսպիսի տեղեկագիր մ'անհրաժեշտ էր ըստ իր, եւ եթէ թողովն ասկէ առաջ սոյն խնդիրը վիճարտութեան ենթարկելէ ետեւ՝ որոշում մը չտուաւ, պատճառն այն է որ հարկ դատեց տեղեկանալ թէ Վարչութիւնն ինչ պատճառներու համար Փիլիպպոս եպիսկոպոսը պաշտօնէն ձգելու հարկադրեր էր, ուստի յղեց խընդիրն Իրաւասութեան դիւանին որ այս մասին պէտք եղած քննութիւնն ընելով տեղեկագիր մը բերէ: Ասկէ դիւրին է ըմբռնել որ Երեսփոխանաց շատը տեղեկութիւն չ'ունէր խնդրոյն պարագայից վրայ, եւ ստուգիւ ալ այնպէս է, միայն Հայրենիք լրագրոյն մէջ տեղեկագիր մը հրատարակուած է, Տիգրանակերտի մէջ ծագած խռովութեանց վրայ, եւ այն ալ չգիտենք թէ պաշտօնական էր:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց պատուիրակաց ստորագրութիւնը կը կրէր:

ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Պահ

մ'առաջ Պէրգէրեան էֆէնտիին կառաջարկէր Վարչութեան յանձնարարել զՓիլիպպոս եպիսկոպոս համակիր տրամադրութեանց ներքեւ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես Սրբազան Պատրիարք Հօր յանձնարարելու առաջարկութիւն ըրի, ու չէ թէ Վարչութեան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Սահմանադրապէս Վարչութիւն եւ Պատրիարք ի միասին կ'սակցուին, եւ չէ կարելի դանոնք ուրոյն մարմիններ նկատելով առանձինն յանձնարարութիւններ ընել: Այս այնքան բացօթոշ է որ Սրբազան Պատրիարքն ալ տարբեր կերպով չ'ընդունիր: Ինչ որ է, բայց ո՞վ արդեօք Նորին Սրբազանութիւնն արդիւրած է որ Փիլիպպոս եպիսկոպոսը չ'ըրի իւր վիճակը, միթէ Ազգ. ժողովը վճիռ մ'առնի՞ այս մասին, որ հիմա ելնէ այդ յանձնարարութիւնն ընէ: Սրբազան Պատրիարքն ինք բերել տուաւ զայն, եւ եթէ պատշաճ համարի դարձեալ ինք կըրնայ վերադարձնել, Բայց խնդիրն այս չէ, Փիլիպպոս եպիսկոպոս կը բողոքէ թէ անիրաւութիւն մ'եղած է իրեն դէմ, միթէ Ազգ. ժողովը քննեց խնդիրն, որ անոր նպաստաւոր յանձնարարութիւններ ընէ: Գուք իսկ ձեր տեղեկութիւններն Փիլիպպոս եպիսկոպոսին Պօլիս գալէն ետեւ՝ իրմէ առած էք:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջելով) — Ես զինքն անգամ չեմ ճանչնար:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Այո, իրմէ՝ թունաղբիւրէն քաղեցինք, մնաս ունի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Իմ խօսքս երկդիմի չէր, ես ինքս ալ իրմէ բացատրութիւն ստացայ, դուք ինչո՞ւ չ'առնուք: Բայց միւս կողմն ալ կայ, սպասուիրակները կան, անոնցմէ թվ տեղեկութիւն առաւ, միակողմանի վճիռ չ'առնեք, ծիծաղելի կը ըլլանք վերջը: Եթէ կարդայիք բարենորոգմանց Յանձնախմբին կողմէ Փիլիպպոս եպիսկոպոսի զըրուած մէկ մտերմական նամակը, ամենքդ ալ պիտի խոստովանիք թէ Տիգրանակերտի խնդ-

րոյն մէջ յանցաւոր է նա : Երբ բարենորոգմանց խնդրոյն համար Տէրութեան կողմէ քննիչներ կը զրկուէին ի Տիգրանակերտ, աղան ալ իւր կողմէ՝ առիթէն օգուտ քաղելու համար պատուիրակներ զրկեց հոն, ֆիլիպպոս եպիսկոպոս այս վճռական պարագային մէջ այնպիսի ընթացք մը բռնեց, զոր գիտցողն անհնար է որ չհամագուբի անոր յանցապարտ ըլլալուն :

ԶԱՅՆԵՐ. — Ի՞նչ բրու :

ՓԱՓԱՁԵԱՆ Ս. ԷՅ. — (Շարունակելով) Դատաստան առաջարկուեցաւ պահ մ' առաջ, եւ չեմ հաւատար որ կարելի ըլլայ այս երկրին մէջ դատաստան տեսնել, եթէ դատաստան ըլլար այն առեն որքան ծանր պիտի ըլլային դատապարտութիւնները :

Երբ Գարեգին վարդապետ Տիգրանակերտի պատուիրակ նշանակուեցաւ, յօտար չէր հոն երթալու, այլ Կարնոյ պատուիրակութեան պաշտօնը ստանձնել կուզէր, բայց Կարին՝ Վահան վարդապետն որոշուած էր զրկել թէ եւ գիտողութիւններ եղան թէ Վահան վարդապետի եւ Յարութիւն եպիսկոպոսի մէջ անհասամատիւթիւն ըլլալուն պէտք չէ զայն հոն զրկել :

ԶԱՅՆԵՐ. — Ի պաշտօնէ կը խօսի՞ք :

ՓԱՓԱՁԵԱՆ Ս. ԷՅ. — Ի հարկէ՛ երբ Յանձնաժողովոյ անդամներէն մին է խօսողը, պաշտօնական են իւր խօսքերը : Եւ որովհետեւ նախքան իմ արտաքին գործերը պաշտօնով Գարեգին վարդապետ Տիգրանակերտ եւ Վահան վարդապետ Կարին յուղարկուած էին, եւ տեղական պիտոյից եւ հանդամանաց հասու, բարենորոգմանց Յանձնախումբը պընդեց որ եւ է փոփոխութիւն չընելու համար, հետեւապէս դարձեալ մրեւնոյն վիճակներն, ուր դացեր էին արդէն, յուղարկեց զանոնք, որպէս զի իրենց պաշտօնը կատարեալ գիտակցութեամբ յաջողին կատարել : Այս միջոցին Տիգրանակերտն հեռագիր եկաւ որ Գարեգին վարդապետը չզրկուի հոն, բայց պատասխան

արուեցաւ որ առաջնորդական գործոց միջամուտ ըլլալու պաշտօն չունի նա, այլ բարենորոգմանց կայսերական քննիչներուն հետ էր իւր գործը : Չմտնանք ըսելու որ Գարեգին վարդապետ արդէն առաջնորդ ընտրուած էր Ակնայ, եւ իւր պաշտօնը կատարելէ ետեւ՝ իւր հովուական վիճակը պիտի երթար : Բայց ֆիլիպպոս եպիսկոպոս կրքոտ բնաւորութիւն մ'ունի, եւ այն աստիճանն որ Պօլիս դառնէ ետեւ՝ նոյն իսկ Պատրիարքարանի մէջ՝ Արարական Պատրիարք Զօր հետ կալու ընելու համար ձեռնարկելու, եւ Նորին Արարականութեան համբերութիւնը սպասելով ուզեր էր ծանր միջոցներ ի գործ դնել անոր դէմ :

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՅ. — (Ընդմիջելով) Այդ ամենը հօր եւ դուքի մէջ կատարուած բաներ են :

ՓԱՓԱՁԵԱՆ Ս. ԷՅ. — (Շարունակելով) Կրնաք երեւակայել որ երբ Պատրիարքարանի մէջ այս ընթացքը բռնէ, գաւառին մէջ ինչեր չընեն, իրեն յատուկ նամակ ուղղելով ըսինք թէ դուն վիճակին առաջնորդն ես, կազակներ յանուն Աստուծոյ, յանուն աղգին, զիջում ըրէ հակառակորդացը, հաշտուէ անոնց հետ եւ օրէն Գարեգին վարդապետին : Այս նամակը Պօյաճեան էֆէնտի տունը որ անոր յանձնէ, բայց անօգուտ եղան այս յորդորները : Ահաւասիկ այս տեղ է ֆիլիպպոս եպիսկոպոսի յանցանքը կեղերնին նկատմամբ :

ՄԷՋՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՅ. (Ընդմիջելով) — Գարեգին վարդապետ իմ բարեկամս է, բայց ճիշտը խօսելով ոչ նուազ կը քոտ է մուսէն :

ՓԱՓԱՁԵԱՆ Ս. ԷՅ. — Ես Գարեգին վարդապետի բարեկամը չեմ, ընդհակառկ ֆիլիպպոս եպիսկոպոսն էր իմ բարեկամս, բայց արդարութեան վրայ է խնդիրը, եւ բարեկամութիւնը ես կը մնայ :

Մենք պատուիրակաց հրահանգ տուեր էինք որ փոյթ տանին ներքին խնդիր չյարուցանելու, Կարնոյ համար այդ կասկածը կար,

չցիտեմ Վատան վարդապետին թէ ոչ՝ Կարնոցոց խոհեմութեան շնորհիւ հոն գործը կանոնաւոր եւ խաղաղ կերպով կատարուեցաւ, եւ կոխը Տիգրանակերտի մէջ ծագեցաւ : Եւ պատճառ ունեցեր են Տիգրանակերտի պատուիրակներն այդ հեռագիրը քաշելու, չցիտենք, հեռագիրն եկած ատեն՝ եւ ոչ իսկ Բարենորոգմանց յանձնախումբը ներկայ էր : Յանձնախումբն օրաց անդամէ կը բաղկանար, որոց չորսը Վարչութեան անդամ էին, եւ ֆիլիպպոս եպիսկոպոսի պաշտօնականութեան հետագիրը զարնուելէն ետեւ՝ իմացանք մնաք գործը, ինչպէս որ իմացանք նաեւ որ օտար միջամտութիւն ըլլալով Արարական Պատրիարքը հեռագրով երկրորդ հրահանգ յուղարկել էր իւր տեղը մնալու : Հիմա այս տեղ է խնդրոյն հոլին, ֆիլիպպոս եպիսկոպոսի յանձնարարութեան որ զիջում ընէ, Գարեգին վարդապետին այ հրահանգ արուեցաւ որ խնդիր չհանէ : Ինչէր պատահեցան արդեօք, որ խնդիր ծագեցաւ վերջապէս : Դուք ֆիլիպպոս եպիսկոպոսը Արարական Պատրիարք Զօր յանձնարարել ուզած ատեննիզ՝ կը մտածէք արդեօք, որ արդէն Նորին Արարականութիւնն Գարեգին վարդապետն անպարտ համարած է, վասն զի Խարբերի վիճակին մէջ նոր պաշտօն մը յանձնել է անոր : Երէկ Մասիսի մէջ ֆիլիպպոս եպիսկոպոս նամակ մը հրատարակած էր իւր ստորագրութեամբ, իտի՛ր բաներ գրեր է որ կարեւորութեան արժանի չեն, միայն կէտ մը կայ ուշադրութեան արժանի. «պատուիրակները, կը գրէ, տեղական կառավարութեան հետ միացան եւ զիս պաշտօնէ ձգեցին», ըսել է բացարձակապէս կամբաստանէ զանոնք : Մինչեւ ցարդ Վարչութեան դէմ էր իւր քողոքը, այժմ պատուիրակներն կամբաստանէ՝ եւ ուրիշ գոյն եւ կերպարան կուտայ իւր գտտին : Երկու կողմն մէկը յանցաւոր է, պէտք է ֆիլիպպոս եպիսկոպոս կամ իւր ըսածը հաստատէ, կամ յետս կուգէ, եւ պատուիրակները զիրենք պաշտպանեն :

Եզրակացնելով հօտքս՝ կառավարկեմ յղել խնդիրը Վարչութեան, որ այս ամէն պարագաները նկատողութեան առնու եւ տնօրինէ զարժանն :

(Շուկը)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Հանդարտեցէք, կազակ եւ թոյլ տուէք ինձ քանի մը խօսք ընել : Ես չպիտի խօսիմ ձեզ ֆիլիպպոս եպիսկոպոսի յանցաւոր կամ անմեղ ըլլալուն վրայ, վասն զի օրէնքն իբրեւ ատենապետի չներեր

ինձ ձեր վիճարանութեանց մասնակցել, այլ խնդրոյն աստեանական ընթացքին վրայ քանի մը գիտողութիւն պիտի ընեմ :

Այս խնդիրը հետզհետէ այնքան դանազան դոյներ կստանայ, այնքան ձիւղեր կարծակէ, որ հարկ կը ըլլայ մեզ վայրկեան մը կանկ առնուլ եւ խորհիլ թէ ինչ եղանակաւ կարելի է խնդրոյն լուծմանը հասնիլ :

Եւ ինչ էր խնդրոյն նիւթը, հեռագիր մը եկած էր գաւառէ մը, որու ստիպողութիւն տալ առաջարկուեցաւ եւ ժողովն ընդունելով զայն, որոնց խնդիրը նկատողութեան առնուլ, Տեանինք հիմա թէ մեր ներքին կամուկազիրը ինչ կը տրամադրէ այս տեսակ պարագայից համար, ահաւասիկ կը կարգամ ձեզ :

«Յօդ. 57. Օրինական խնդրոյ կամ առաջարկութեան մը համար ստիպողութիւն կրնայ խնդրուիլ :

Եւ դարձեալ՝ «Յօդ. 58. Ստիպողութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաւորապէս պէտք է ըլլայ :

«Ճողովն անվէ՛ զորոնց Ատենապետին հարցմանը վրայ, եթէ տեղի կայ ելք տալու ստիպողութեան խնդրանքին » : Կանոնին այս երկու արամադրութիւններն ի գործ դրուեցան, ստիպողութիւնն առաջարկուեցաւ, եւ պատճառաւորապէս, տեանինք հիմա թէ այնուհետեւ կանոնը մեզ ինչ կը հրամայէ ընել : Ահաւասիկ ուրիշ յօդուած մը :

«Յօդ. 59. Եթէ ստիպողութիւն յայտարարուի ժողովին հարցուելէ ետեւ՝ զիւսաններուն կը յղուի, եւ ըստ այնմ վիճարանութեան օրը կորոշուի :

«Նախաքննիչ զիւսանի տեղեկագրին վրայ ժողովն անմիջապէս վիճարանութիւնը կը բանայ եւ պարզ ձեւով (այսինքն միակ քուէարկութեամբ) կը տնօրինէ որոշումը » :

Կը տեսնէք որ սոյն յօդուածին համեմատ չենք կրնար մէկէն ի մէկ որոշում տալ խնդրոյն որ արդէն նախաքննութեան յղուած է : Այն վիճարանութիւնն որ կատարուեցաւ, օգտակար եղաւ անշուշտ խնդիրը լուսաւորելու համար, բայց այլ եւս ուրիշ բան չմնար մեզ ընել, այլ յառաջիկայ նիստին օրակարգն անցընել :

ՓԱՓԱՁԵԱՆ Ս. ԷՅ. — Դուք, Ատենապետ էֆէնտի, ՅԳ.դ յօդուածը կը ցցնէք մեղի, բայց կրնաք կանոնին մէկ այնպիսի տրամադրութիւնը ցցնել որ ժողովն մէջ վիճարանութեան զրուած խնդրի մը գիւսանի յղել հրամայէ մեզ :

ՊԵՐՈՒՆԵԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն ժ. նիստի տօննագրութեան .
2. Բացակայութիւն երեսփոխանաց .
3. Պատասխանի հարցման երեսփոխան Բ. Ղազարոսեան էֆէնտի .
4. Պատասխանի հարցման երեսփոխան Ս. Փափաղեան էֆէնտի .
5. Երեսփոխան Մ. Քափամաճեան էֆէնտիի հարցումը .
6. Երեսփոխան Մ. Քափամաճեան էֆէնտիի երկրորդ հարցումը .
7. Երեսփոխան Մ. Քափամաճեան էֆէնտիի առաջարկը .
8. Երեսփոխան Ս. Փափաղեան էֆէնտիի առաջարկը .
9. Աղերսագիր Յ. Չաքրեան էֆէնտիի .
10. Տիգրանակերտի հեռագիրը .

Գիւն 2 որոշ

ՍԵՓԷՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՍԵՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԵՍՏԿՍՏԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալափիոյ Ս. Լուսաւո իջ
 Եկեղեցւոյ բանկալը Է. Հայ գրավանառաց քով